





241  
n-20



Մ Ա Տ Ե Ն Ա Պ Ա Ր Ա Ն  
Մ Ա Ն Կ Ա Ն Յ



12

Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ

1872

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY



UNIVERSITY OF CHICAGO

1872

LIBRARY

1872



# ՔՐԻՍՏԻՆԷ

Կ Ա Մ

ԳԱՌՆՈՒԿ



ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

—  
1855



53120497

400-004

59806-*ms*



587-2007





ԲՐՒՍՏԻՆԷ

# Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ

## Գ Լ Ո Ւ Խ Ս Ա

Քրիստոսի նկեւ ու իր վերոնկիբաւ մայրը .

ԼՄԱՌՈՒԱՆ սաստիկ տաք օրերէն մէկուն մեջ, երբոր արեւուն ջերմ ճառագայթները իրենց հրակէզ տաքութիւնը երկրիս վրայ սփռած էին, և երկայն ատեն փչած անուշ քամիներն ալ չէին կրնար քիչ մը զովացնել օդը, խեղճ Քրիստոսինէն թողլով իր խրճիթը ուր որ հիւանդ պառկած էր իր մայրը, գնաց մօտ անտառէն ելակ ժողվելու : Կնքը հազիւ թէ ան ժամանակը տասը տարուան կար, մաքուր հազուած և գլուխը թէպէտև յարկէ գլխարկ մը դրած էր, սակայն անով ալ

արևուն տաքութենէն չէր կրնար ինք զինքը սաշտականել . քրտինքը աղբիւրի պէս խոշոր կաթիլներով կը վազէր ճակատէն . բայց ինքը ամենևին փոյթ չէր ընել , ու ելակը կը ժողվէր :

Այս աշխատութեան ատեն , մէկ կողմէն կը մտածէր թէ ինչ կերպով կրնայ իր խեղճ մայրը մխիթարել . ինքն իրեն կ'ըսէր . պէտք է որ իմ խեղճ մօրս օգնեմ" ինչու որ իրեն վրայ ծանր հիւանդութիւն եկած ըլլալուն , բան մը ընելու կարողութիւն չէ մնացեր : Հարկ է ձեռքէս եկածին չափ ջանամ իրեն վշտերը թեթևցնել . վասն զի ինքն ալ սրչափ նեղութիւններ քաշիր է զիս ինչուան աս տարիքը հասցնելու համար , և հիմայ որ ես բաւական մեծցած եմ , պէտք է իրեն երախտագէտ ըլլամ : Խեղճ մայր , կ'ըսէր , ու աչքէն արցունք կը թափէր . ինչ աւելի բան կրնամ ընել քեզի , քու ինձի ըրած անբաւ երախտեացող տեղը :

Արքոր ինքը ասանկ մտածութեանց հետ էր , յանկարծակի արևը գոցուեցաւ ու սկսաւ սաստիկ հով մը փչել . տեսաւ Վրիստինէն որ ամպերը իրարու վրայ դի-

զուած են՝ սկսաւ վախնալ : Աւ որպէս  
զի մըրկին չի հանդիպի , անտառէն շու-  
տով ելաւ . ելակով լեցուն կողովը , որուն  
վրայ տերեւներով գոցած էր , թեէն կախած  
սկսաւ դէպ ի տուն դառնալու փութալ :

Հաղիւ թէ քիչ մը առաջ գնացեր էր ,  
հոլը սկսաւ սաստիկ ձայնով և ուժով  
մը ցնցել անտառին մէջի հին ու մեծ ծա-  
ռերը , ու հեղեղի պէս անձրև դալ . թանձր  
ամպերով պատած երկնքին կամարը կ'ո-  
րոտար , ու ան փայլակներուն և կայծակ-  
ներու ահագին ձայներէն բոլոր երկիրս կը  
թնդար . անանկ որ աս զարհուրելի լու-  
տովը ամբողջ մթին անտառը լեցուեցաւ :

Քրիստինէն դիտնալով թէ շատ վտան-  
գաւոր բան է՝ մըրկի ատեն ծառերու տակ  
կենալը , գնաց ցանկի մը տակ ծածկուե-  
ցաւ , ու անձրևին դադրելուն կ'ըստասէր :  
Մէյ մ'ալ յանկարծ ողբալի ձայն մը  
լսեց , որ դժբաղդութեան հանդիպած  
տղու ձայնի կը նմանէր :

— Արեւի է որ ըսաւ , տղայ մը ճամ-  
բուն վրայ անձրևի բռնուեր է , երթամ  
տեսնամ թէ ինչ բան է : Աւ առանց  
սպասելու անձրևին դադրելուն , փայլա-



տականց և որոտման անցնելուն՝ սկսաւ  
վազել դէս ի ան կողմը, ուսկից որ ձայնը  
կը լսէր: Այլ ահա տեսաւ որ հոն խեղճ  
զառնուկ մը, անձրևէն շարաշար լծրջած  
կը գողգորղար ցրտէն. Քրիստինէն ին-  
քիրեն ըսաւ: — Սիրուն գառնուկ՝ անտա-  
րակոյս կը մնասուէիր ու կը մեռնէիր հոս,  
լծէ որ չլսէի քու անուշ մայելուդ ձայնը,  
ու չգտնայի գրեզ. ես գրեզ կը սլահեմ  
մեր քովը, կը կերակրեմ՝ գրեզ, և անշուշտ  
եմ՝ աս բանիս մայրս գէմ չի կենար:

Քրիստինէին սիրտը շատ ցաւելով կեն-  
գանւոյն վրայ, իր գողնոցովը սրբեց չոր-  
ցուց անոր բուրդը, ու գիրկը առաւ զին-  
քը՝ որ տաքցրնէ, և սրտաատուեցաւ  
ձամբայ իյնալու. բայց որովհետև գեռ  
անձրևը չէր դադրած, հարկադրեցաւ  
նոյն իր առջև ցանկապատ տեղը քաշուիլ:  
Այլ հոն սիրտը կ'եփէր՝ լծէ երբ սլիտի  
անցնի փոթորիկը, որ գառնուկը շուտով  
իրենց խրճիթը տանի՝ մօրը ցուցրնելու. և  
աս միջոցին ամէն մէկ վայրկեանը իրեն  
մէյմէկ ժամ կ'երևնային: Վերջապէս  
շատ շանցաւ՝ հովը իջաւ, ծառերը շար-  
ժեղէն դադրեցան, երկինքը բացուեցաւ, և



Քրիստոսինէն արտորաց դառնալ իր մօրը՝  
դառնուկը հետը առած . բայց տաստիկ  
ուրախութենէն ու արտորալէն ճամբան  
չունչը կտրեցաւ , և հեալով հազիւ թէ  
հասաւ իրենց խրճիթը՝ վազեց մօրը խու-  
ցը , և դեռ ներս չմտած , — Ա՛հ սիրելի մայր  
իմ , ըսաւ , տես թէ ինչ գեղեցիկ դառ մը  
դտայ անտառին մէջ . խեղճը ցրտէն կը  
սառէր , ու կը մեռնէր ալ՝ թէ որ ես չը  
դտնային զինքը ու չսերէի հոս : Սիրելի  
մայր իմ՝ թէ որ ուզենաս , ես զինքը հոս  
սլահելով կը մեծցընեմ՝ և ամէն հոգ կ'ը-  
նեմ որ ամենեւին բան մը չսլակսի իրեն .  
տես թէ ինչպէս անուշ բնութիւն , ու սի-  
րելի կերպ ունի :

Մայրը նայեցաւ դառնուկին վրայ , և  
տեսաւ որ թէպէտ շատ սիրուն էր , բայց  
ան զգացմունքը չունեցաւ ինչ որ Քրիս-  
տոսինէին վրայ կը տեսնուէր . դարձաւ ըսաւ  
իրեն — , Դուն լաւ չես մտածած գուտար  
իմ . աս դառը մենք չենք կրնար մեր քովը  
սլահել , որովհետեւ մերը չէ , և կարծեմ թէ  
մտար եղած գեղի վարձուորին է . վասն  
զի ինքը միայն ոչխարներ կը սլահէ : Ե՛ն-  
տարակոյս խեղճ կենդանին անտառին

մէջ մոլորած է, ու ան մըրկին ատենը  
մոռցեր են զինքը՝ ինչպէս որ շատ անգամ  
կը հանդըպի, երբոր հօտը անձրուէ բռնը-  
ւած կ'ըլլայ: Աւտի պէտք է որ աս իրի-  
կուն տանիս զինքը ան գեղը, որովհետեւ  
ուրիշին բանը՝ պէտք չէ և ոչ մէկ գիշեր  
մը մեր տանը մէջ պահել, չէ նէ ասով մեծ  
անիրաւութիւն ըրած կը սեպուինք. թէ-  
պէտեւ մենք աղքատ ենք, բայց մեր հա-  
ւատարմութիւնը պէտք չէ որ կորսնցը-  
նենք: — Աղէկ չէք մտածեր ըսաւ ան-  
դիէն որմնագիր մը՝ որ գրացիին պարտի-  
զին մէջ պատ մը կը նորոգէր, ու կը լսէր  
Քրիստինէին և իր մօրը խօսքերը. և ին-  
չու այդչափ խղճահարութիւն կ'ընէք.  
գիտէք ինչ պէտք է ընել, երբ իրիկուն  
կ'ըլլայ՝ գտնուկը կը մօրթենք, ու անոր  
փափուկ և համեղ միսը մէջերնիս կը բա-  
ժնենք, որ մեզի գէթ երկու անգամուան  
կերակուր կ'ըլլայ. ետքը մօրթն ալ կը  
ծախենք, ասով ամենեւին չի վնասուիր  
վարձուորն. վասն զի հարուստ է, և ինքը  
հարիւրէն աւելի ոչխարն ունի իր փա-  
րախին մէջ. ուստի և ոչ կրնայ խմանալ  
թէ այնչափ ոչխարներէն մէկը պակսեր է:

Կարելի է որ կը վախնար թէ ուրիշները  
կ'իմանան . ապահով եղիք որ ամենեկին  
մարդ մին ալ չկրնար իմանալ . ինձմէ ալ  
մի վախնար , որովհետեւ ես ալ մարդու բան  
մը չեմ ըսեր :

— Ի՞նչ կ'ըսես , պատասխան տուաւ  
Քրիստիանէին հիւանդ մայրը . կ'ուզես որ  
այսպիսի անիրաւութիւն ընենք մենք , գիտ  
ցած եղիր որ թէպէտ գառին տէրը հազա  
րաւոր ոչխարներ ունենայ , և ամենեկին  
չկարենայ իմանալ թէ անոնց մէջէն մէկը  
կորսուեր է , սակայն մեր ըրածը միշտ ա  
նիրաւութիւն և գողութիւն եղած կ'ըլ  
լայ :

— Իրաւունք ունիս , սիրելի մայր իմ ,  
կանչեց Քրիստիանէն . աս գառնուկը պէտք  
է որ իրեն յատուկ տիրոջը դարձուի , չէ  
նէ Մատուած որ ամէն բան կը տեսնայ ,  
կանուխ կամ ուշ կը սրտով գտնուի թէ  
որ աս անիրաւութիւնը ընելու ըլլանք ,  
ուրեմն . . . : Իսկո՞՞՞ գառնուկ . մորթել  
զքեզ . չէ՛ , չէ՛ . ես զքեզ անտառէն  
մորթելու համար չըրի , այլ , անվաս  
տիրոջդ ձեռքը հասցնեմ : Մս ըսելով  
մէկէն ասաւ գառնուկը գողնոցին մէջ

դրաւ , ու ճամբայ ելաւ մօտիկ գեղը եր-  
թալու :

Հատ ուրախացաւ Քրիստինէին մայ-  
րը , տեսնելով իրեն աղջկանը այսպիսի  
յօժար կամօք հնազանդութիւնը . անոր  
համար շնորհակալ եղաւ Մատուծոյ՝ որ ի-  
րեն անանկ բարի և հնազանդ զաւակ մը  
պարզեւեր է :

Քրիստինէն երբոր գեղը հասաւ , շիտակ  
վարձուորին տունը գնաց , որ ընկերոջը  
ու զակրններուն հետ մէկ տեղ՝ տանը դի-  
մացը նստած և ուշադրութեամբ գեղեցիկ  
ծիրանի դօտին կը դիտէին , որուն գոյները  
մոխրագոյն ամպերուն մէջէն խիստ որոշ  
կը տեսնուէին՝ և ամբողջ կամար մը ձեւ-  
ցուցած էր հորիզոնին մէկ ծայրէն մէկայրը :

Մըրկին ահաոր բռնութենէն տակնու  
վրայ եղած բնութիւնը ոգի առաւ . օրը  
պարզեցաւ , ոսկեցօժ արևը մօտիկ լեռ-  
ներուն ծայրերէն իր ետքի ճառագայթ-  
ներովը՝ իրիկուան կարմիր վերջալոյսը և  
տեէն կը թողուր . թռչունները ծառէ  
ծառ թռչտեցով՝ ամէնքը մէկտեղ իրենց  
անուշ ձայներովը կը ճրճրւային :

Մտնք խելքէ մտքէ վեր բան կ'երևնան

ըստ վարձուորին ընկերը իր տղոցը , ու  
ամէնն ալ հարկաւոր բաներ են . վասն զի  
չկրնար ըլլալ որ միշտ ազէկ օգեր ըլլայ ,  
այլ պէտք է որ երբեմն երբեմն հով ու  
մրրիկ ալ ըլլայ՝ որ անձրև բերեն , օդը  
մաքրեն : Աս գեղեցիկ ծիրանի գօտին ,  
որուն վրայ այնչափ զարմացաք՝ մէկ նշան  
մըն է մրրկին անցնելուն , և աս նշանը  
Աստուած ջրհեղեղէն ետև մարդկանց հետ  
հաշտուելու ատեն՝ « Այդ նահապետին ցը-  
ցուց . և ինչպէս որ որոտումը Աստուծոյ  
կարողութիւնը կը ցուցնէ , այնպէս ալ  
ծիրանի գօտին՝ Աստուծոյ անհուն գութը  
ու սէրը որ մարդկանց վրայ ունի :

Ատքը կամաց կամաց մութը կոխեց ,  
ծիրանի գօտին ալ աներևոյթ եղաւ . Քրիս-  
տինէն մէկդի քաշուած՝ վարձուորին կրն-  
կանը ու անոր տղոցը ըրած խօսակցութիւ-  
նը մտիկ կ'ընէր , և չէր համարձակէր ա-  
նոնց խօսակցութիւնը կտրելու . վասն զի  
գիտէր թէ լաւ բան չէ , ու մարդավա-  
րութեան գէմ է : Ատքը երբ ժամանակն  
հասաւ , գառնուկը գոգնոցէն դուրս հա-  
նեց , ու ամէնուն դիմացը պատմեց թէ  
ինքը մրրկի ատեն ինչպէս գտեր էր զանի-

կայ, և թէ ինչ խնամք ցուցուցիր է ա-  
նոր վրայ :

Ինչ բարի զաւակ ես, ըսաւ իրեն վար-  
ձուորին ընկերը . ինչու որ հաւատարմու-  
թեամբ դարձուցիր մեզի մեր կորսրնցուցած  
գառնուկը . աս աղէկութիւնդ երբ ալ ըլ-  
լայ քեզի մեծ սրատիւ սխտի ընէ, և մա-  
նուանդ աս գեղեցիկ սկզբունքդ որ աս  
դեռարողջ հասակիդ միջ ունիս, վերջը  
քեզի մեծամեծ բարեաց սրատճառ սխտի  
ըլլան :

— Իրաւցրնէ, ըսաւ վարձուորն ալ, աս  
աղջկան ըրածը մեծ գովեստի արժանի  
բան է . ետքը իր տղոյը գառնալով,  
ձեզի օրինակ ըլլայ՝ ըսաւ, Քրիստինէն,  
ջանացէք առաքինի ըլլալու՝ ինչպէս աս  
աղքատ աղջիկը : Աս է քիչ բան ունե-  
նալ ու քիչ վայելել, քան թէ անիրաւու-  
թեամբ մեծութիւն ու հարստութիւն դի-  
զել . այս անկեղծ առաքինութիւնը մէկ մեծ  
գանձ մըն է որ երկրիս վրայ դժուարաւ կը  
գտնուի :

Տղաքը զարմացան Քրիստինէին ըրած  
գործքին վրայ, ու ապշած վրան կը նայե-  
ին . վարձուորին անդրանկի որդին Յով-



Հաննէս վազեց ախոռին դուռը բացաւ , և  
գառնուկին մայրը դուրս հանեց . գառնու-  
կը իրեն մայրը տեսածին պէս ուրախու-  
թենէն մայելով՝ վեր վեր ցատքըռտելով՝  
գնաց մօրը քով : Տեսնելով աս բանս  
Քրիստինէն՝ շատ զարմացաւ , և սիրտը  
կըլելով ըսաւ . իրաւ որ շատ ուրախացայ՝  
գառնուկը իրեն մօրը դարձնելուս հա-  
սար :

Պատասխան տուաւ վարձուորը ըսե-  
լով թէ ես կը տեսնամ որ դուն ալ շատ  
առաքինի , հաւատարիմ՝ ու բարի անձ  
մըն ես . աս ըրած աղէկութեանդ փոխա-  
րէն , ահա աս գառնուկը նորէն քեզի կը  
սպարգեւեմ : Բայց որովհետեւ դեռ շատ  
սղփտիկ է , և կաթէն չկրնար կտրուիլ ,  
լաւ կ'ըլլայ որ դեռ տանըջինդ օր մըն ալ  
հոս պահենք . ետքը Յովհաննէսը քեզի կը  
բերէ . ան ատենը դուն քիչ աշխատանքով  
կրնաս պահել զինքը : Արթալու ելակ ժող-  
վելու ժամանակ հետդ մէկտեղ կը տանիս  
զինքը՝ դաշտն արածելու . և աշնան ատեն  
քիչ քիչ խոտ ալ կը ժողլիս ձմեռուան հա-  
մար . ասով քիչ մ'ալ ձեր աղքատութեան  
դարման մը կրնայ ըլլալ . որովհետեւ բաց

ի կաթէն՝ վրայի բուրդն ալ կրնաք առնուլ, և անով գուրպաներ հլուսել ու ծախել :

Քրիստիանէն ուրախ սրտով վարձուորին բոլոր ընտանեացը մնաք բարով ըսելով, ուղեց իր տունը դառնալ . բայց վարձուորը զինքը շթողուց վազեց բերաւ իրեն հացով կաթ՝ որ ուտէ . նաև տասուերկու հաւկիթ, սլզտի գլուխ մը կարագ կաղամբի տերեւի մէջ սլլած, ապսպրելով որ հաւկիթներն ու կարագը իրեն մօրը տանի, և շատ բարև ընելով իրենց կողմանէ՝ ըսէ մօրը թէ հլուսուածներէն շուտով առողջանալուն համար աղսթող են Աստուծոյ : Ասկէ զատ ապսպրեց Քրիստիանէին, թէ երբոր մայրդ բանի մը կարօտութիւն ունենայ, եկուր մեր քով, և մենք սիրով կը ջանանք՝ ձեռքերնէս եկածին չափ զինքը մխիթարելու :

Ուրախութեամբ ու ընծաներով լեցուած, սկսաւ Քրիստիանէն երթալ իր հլուղը . երկինքը պայծառ էր, աստղերը կը փառիլէին, լուսինը կասպտագոյն մթնոլորտին մէջ արծաթի պէս կը տեսնուէր : Անձրեւէն բոլոր բնութիւն զովայեք



էր, ու մօտիկ դաշտերուն ծաղկանց անուշ  
 հոտերը բուրած կը տարածուէին ամէն  
 կողմ. անանկ որ՝ ուրիշ անգամ Քրիստի-  
 նէն այնչափ չէր զուարճացած՝ ինչպէս  
 աս անգամս. իր ուրախութեան մէկ մեծ  
 պատճառն ալ դառնուկն էր, և անհամբե-  
 թութենով կ'սպասէր թէ կրբ սլիտի անցնի  
 ան տասնըհինգ օրերը, որ Յովհաննէս  
 դառնուկը իրեն դարձրնէ: Աս մտած-  
 մունքներուն և ուրախութեան մէջ ընկըղ-  
 մած, մէյմըն ալ յանկարծ ինք զինքը իր  
 մօրը հիւղին դիմացը գտաւ, առանց իմա-  
 նալու թէ ինչպէս հասաւ հոն:

Արբոր տուն մտաւ՝ մէկէն վազեց իր  
 բարեպաշտ մօրը քով, ու պատմեց ուրա-  
 խութեամբ ամէն բան մէկիկ մէկիկ ինչ որ  
 պատահեր էր: Մայրը ըսաւ. կը տես-  
 նաս ու կը յիշես ան խօսքը որ միշտ քեզի  
 կը զրուցէի, թէ մէկ ուրախութիւն մը չի-  
 կըրնար հաւատարիլ ան ուրախութեանը որ  
 կ'ունենայ մարուր խղճմտանք ունեցող  
 մարդը. և ահա մեր անկեղծ հաւատար-  
 մութիւնն է որ մեզի ասանկ մեծ ուրա-  
 խութեան պատճառ եղաւ: Հազար ան-  
 դամ աւելի վեր պէտք է սեպեց հողաց

1007-էր

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 ՀԱՅՏԱՆ  
 ԱՐԿԱԴԻՍ

խաղաղութիւնը, քան թէ ան ամէն բանե-  
րը որ երկիրս կրնայ մեզի տալ. հոգւոյ  
խաղաղութեամբ հարուստ կ'ըլլայ մարդ,  
թէ և իրեն արտաքին ձեռքը աղքատ ըլ-  
լայ. առանց անոր՝ աշխարհքիս ամէն բա-  
ներն ալ ունայն ու մուխի պէս կ'անցնին :  
Միշտ հաւատարիմ մնանք մեր սուրբ կրօն-  
քին սկզբանցը, և միշտ մեր սիրտը մաքուր  
պահենք. ան ատենը ամենն ինչ տարակու-  
սինք թէ որ մը չէ մէկ որ մը Աստուած  
ասոր փոխարէնը կ'ընէ մեզի : Գուն դեռ  
տղայ ես սիրելի դուստրս, դուն դեռ պիտի  
մեծնաս, ու որ մըն ալ մահուան դուռը  
պիտի հասնիս. գիտես թէ ան ինչ զար-  
հուրելի փայրկեան է մարդուս համար, մա-  
նաւանդ այնպիսւոյն որ իր կեանքը աղէկ  
չէ անցուցեր : Աս դառնուկը որ դուն  
կ'ուզէիր հոս պահել թէպէտև իրեն յա-  
տուկ տէրը ուլ ըլլալը չէիր գիտեր, ու  
բոլ մեծ մեղք ըրած չէիր սեպուիր. բայց  
սակայն Աստուծոյ առջև պարտաւոր կը  
մնայիր. վասն զի անիրաւ մարդը Աս-  
տուծոյ արքայութիւնը չկրնար ժառան-  
գել :

Առարկինի մօրը խօսքերը՝ անողուտ չեղան

Քրիստինէին, որովհետեւ անջինջ տալաւ ըստ եցան իրեն մտքին մէջ. սակայն անհամբեր սրբատու ալ ժամերն ու վայրկեանները կը համբէր, սպասելով թէ երբ պիտի անցնին օրերը, որ իր գառնուկը բերեն: Արովհետեւ ինքը օրացոյց չունէր՝ օրերը նշանելու համար, մէկ ուրիշ հնարք մը գտաւ. ամէն գիշեր անկողին մտնելէն առաջ լուսինը կը դիտէր, որ աճման վրայ էր, և կ'ըսէր իր մտքին մէջ, երբոր լուսինը լրանայ՝ Յովհաննէս իր գառնուկը կը բերէ:

Աս տաանըհինգ օրը իրեն համար դար մը երեցաւ. այնչափ անհամբեր էր գառնուկը տեսնելու, որ շատ անգամ աս բանիս վրայ կը խօսէր իր մօրը հետ: Ասկէ պատճառ առնելով մայրն ալ, կ'ըսէր թէ պէտք է մեր փափաքին ու յօժարութեանը չափ դնենք. ամէն բան չկրնար մեր կամայը յարմար դալ. վասն զի Աստուած մեր շատ փափաքած բաներուն դէմ, երբեմն արգելքներ կը հանէ՝ որով գիւրաւ ձեռք չենք կրնար ձգել զանոնք: Պէտք է շատ անգամ փառք տաս Աստուծոյ, որ քու կենացդ մէջ դեռ և ոչ մէկ անգամ մին ալ զքեզ զուրկ չթողուց քու բաղձանք.

ներէդ , ու միշտ կատարեց քու խնդիրքը . միայն թէ մեր կիրքերը թող չեն տար՝ որ աղէկ մտածենք , որով շատ անգամ գէշ բանի տեղ կը դնենք ան բաները՝ որ օգտակար են մեզի . ուտտի դուն ալ հատրերէ , ան ատեն Աստուած դատուելը քու ձեռքդ կը հասցընէ :

Քրիստոսինէ աղէկ համոզուելով մօրը խրատներուն , անկէ ետքը՝ այնչափ ետեէ շեղաւ , թէ երբ պիտի գայ դառնուկը . ինչուան որ եկաւ Յովհաննէս , զարկաւ իրենց խրճիթին դուռը , ու յանձնեց մեծցած գառը : Ահ , ինչպէս մեծցեր է , ինչպէս աշխուժցեր է , ըսաւ Քրիստոսինէն , շոյելով ու պագնելով սղտիկ ոչխարը : Այլ սիրելի մայր իմ , թէ ինչպէս բուրդը խիտ ու ճերմակ է , այնպէս մեծ հոգ պիտի ունենամ վրան որ բան մըն ալ չարակսի իրեն : — Ա՛ռզէի մէկ քանի օր առաջ բերել ոչխարը , ըսաւ Յովհաննէս , բայց հայրս գէմ կեցաւ ըսելով թէ չըլայ որ հիւանդանայ՝ այնպէս շուտով մօրմէն բաժնուելուն համար . տակայն ասկէ ետքը վախ չկայ , վրան զի բաւական մեծցեր է :

Ենորհակալ եմ , պատասխանեց Քրիստ

տինէն , որ այսչափ աղէկ դարմաներ ես  
զինքր . կ'ուզէի փոխարէն մը ընել՝ բայց  
բան մը չունիմ , որովհետեւ աղքատ եմք .  
միայն թէ կը խոստանամ որ առջի ան-  
գամուն խուզած բուրդէն զոյգ մը գուր-  
պայ քեզի համար կը հիւսեմ , և կարծեմ  
թէ աս բանիս սիրելի մայրս ալ պիտի  
հաւանի , ու պիտի ուրախանայ :

Ա երոնիքա , Քրիստինէին մայրը , հա-  
ւանելով , Շատ աղէկ կ'ըլլայ ըսաւ . ա-  
սով քու երախտադիտութիւնդ կերպով մը  
յուզբցած կ'ըլլաս այն ընտանեացը՝ որ քեզի  
ասանկ աղուոր սարգև մը խաւրից : Ատ-  
քը տղուն դառնալով , ըսաւ . — Սիրելիդ  
իմ Յովհաննէս , մեր կողմանէ շնորհակալ  
եղիր քու ծնողացդ , ու ըսէ իրենց թէ մենք  
աղքատ ըլլալով՝ ուրիշ բան չունինք իրենց  
փոխարէն ընելու , բայց միայն մեր անպա-  
կաս աղօթքը . որ եթէ Աստուած ըէ մեր  
աղաչանացը , ասով փոխարէն մը ըրած  
կրնանք սեպուիլ՝ ձեր ըրածներուն :

Յովհաննէս գոհ սրտով գնաց իր բա-  
նին , վասն զի կրցաւ այսչափ մեծ ուրա-  
խութեան պատճառ ըլլալու թէ Քրիստի-  
նէին և թէ իր Ա երոնիքա մօրը :

Քրիստինէն չէր կշտանար գառնուկին վրայ նայելէն , որուն քիչ մը ուտելու բան տալէն ետև , տարաւ զինքը իրենց խրճիթին քովը եղած ախոռը . անկէ ետքը իր հողալու զլխաւոր բաներէն մէկն ալ ոչխարիկը եղաւ , որն որ մօրմէ ետև ամէն բանէ աւելի կը սիրէր : Քիչ ատենուան մէջ գառնուկը անանկ ընտանեցաւ , որ միշտ Քրիստինէին հետը կը քալէր՝ իր ձեռքէն հաց կ'առնէր ու իր սնակէն կաթ կը խմէր :

Շատ անգամ մայրը տեսնելով որ Քրիստինէն գառնուկին վրայ սաստիկ կ'ուրախանայ , հարցուց իրեն թէ՝ — Հիմայ լաւ չեղա՞ն որ ան ատենը մէկէն իրեն տիրոջը դարձուցիր . սրատասխան տուաւ Քրիստինէն , — Հրամմեր ես մայր իմ . և միշտ սողօժք սլիտի ընեմ՝ որ Մատուած ինծի շնորհք տայ , որ կարենամ տուած խրատներուդ համեմատ վարք ունենալ , և քու խօսքիդ միշտ հնազանդ ըլլամ՝ մեր աս գառնուկին պէս . վասն զի աղէկ գիտեմ որ գուն զիս շատ աւելի կը սիրես , քան ես աս սլտիկ գառնուկը :

Քրիստինէն իր մօրը տուած խօսքը սրա



Հնց . ու ամէն օր իրեն մեծ մխիթարու-  
թեան սպասճառ կ'ըլլար , և օրէ օր խոհե-  
մութեամբ ու առաքինութեամբ կը զարգա-  
նար . միշտ կը ջանար որ խեղճ մօրը հի-  
ւանդութեան ցաւերը թեթեւցնէ , և ամե-  
նեկն չէր հեռանար քովէն , բայց միայն եր-  
բոր հարկ ըլլար տանը մէջի աշխատու-  
թիւնները ընել , ու մօրը հարկաւոր եղած  
կերակուրը սպասրաստել : Սիս մեծցրնելու  
համար՝ այնչափ նեղութիւններ քաշեր է ,  
կ'ըսէր երբեմն ինքն իրեն , ուրեմն պէտք  
չէ որ հիմայ ես ալ ինքզինքս իրեն հա-  
մար զոհ ընեմ . և որչափ ալ աշխատիմ  
ու ջանամ , իրեն ինծի ըրած երախտեացը  
փոխարէն չեմ կրնար ընել : Քանի որ պըղ-  
տիկ էի՝ ինքը իրիկունները օրօրոցիս չորս  
կողմը կը պըտըտէր , ու անկէ չէր բաժ-  
նուէր . հիմայ պէտք է որ ես ալ իր ան-  
կողնին քովէն չբաժնուիմ , ու ջանամ  
մխիթարել զինքը իր գառն հիւանդութեա-  
նը մէջ : Ասանկ աղէկ մայր ունենալը՝  
մեծ դանձ մըն է՝ որ ամէն բան կ'արժէ :



## ԳԼՈՒԽ Բ

Վարդանի վարտեհեանս .

ԳԵՂԻՆ մէջ Քրիստինէին ու իր մօ-  
րը խրճիթը լեռան մը ստորոտը՝ խիստ  
գեղեցիկ դիրք ունէր . սա լեռը ծածկած  
էր բարձր ծառերով, ու զազաթինս վրայ  
ամրոց մը կար, որ հեռուէն ալ կ'երևնար:  
Այ ամրոցին մէջ հին կաղնիի ծառեր կայ-  
ին, որոնք բոլոր գեղացւոց հետաքրքրու-  
թեանը առիթ եղած էին . վասն զի հե-  
ռուէն կարծես թէ ամրոցին ծայրը ինչուան  
ամպերը հասած էր . ու ծառերուն վրայ ալ  
ագռաներ, բուեր և ուրիշ թռչուններ կը  
վիստային . ամրոցը հին գոթացի ըսուած  
ձևով շինած էր, ուր կը բնակէր ան ատենը  
Վարտեհեան խաթունը: Այ խաթունը իր  
ընկերոջը մահուանէն ետև Վարդուհի աղ-  
ջկանը հետ չափաւորապէս կ'ապրէր . և  
նորելուկ ոճով՝ այլ և այլ խուցեր զարդա-  
րած էր, որոնց մէջէն մանաւորապէս մէ-



կը հիւրընդունելութեան կամ հանգստեան  
խուցի համար որոշած էր :

Աս առանձնութեան մէջ Վալտէնեան  
խաթուր՝ աշխարհքէ հրաժարածի պէս  
կ'ապրէր . բայց կը նայէր որ իր մէկ հա-  
տիկ աղջիկը աղէկ դաստիարակէ . կը  
ջանար միշտ անոր սիրտը ու մտածմունքը  
շտկել , առաջուց զգուշացնելով ան ամէն  
խաբէութիւններէն՝ որ շատ անգամ ան-  
մեղ սրտերու մնաս կրնան ըլլալ : Միշտ  
արթուն կը կենար անոր վրայ , ու կը կըր-  
թէր զինքը աւելի իր օրինակովը՝ քան թէ  
խօսքով . և կը զգուշացնէր ան ամէն վը-  
տանգներէն՝ որ անխորձ տղոց կրնան հան-  
դիպիլ , իրենց կենացը մէջ :

Վարդուհին աղէկ դաստիարակուե-  
լով՝ անանկ առաքինի մօր մը աչքին դի-  
մացը , զարդարեց իր հոգին ան առաքի-  
նութիւններով՝ որոնք զինքը կը պահէին  
ամէն փորձութիւններէ . ինչպէս մէկ բոյս  
մը պտղաբեր երկրի մէջ ինկած ըլլալով՝ չի  
կրնար ըլլալ որ պտուղ չբերէ : Ինքը գրե-  
թէ Քրիստինէին տարեկից էր , որն որ ա-  
մառ ատեն ամէն օր ժողլած կլակը ասոնց  
ամբողջ կը բերէր ծախելու , ու ասոնցմէ

առած ստակը՝ հաւատարմութեամբ իր աղքատ մօրը ձեռքը կը հասցընէր :

Վարդուհին շատ կ'ուզէր, որ իր մայրը Քրիստինէէն գնէ ելակը. վասն զի Քրիստինէն միշտ անո՞նց նոր ժողլած թարմ ելակներ կը տանէր, խոշոր կողովի մջ դրած, ու վրան ալ զարդարուն կերպով կը ծածկէր որթի տերեւնելով : Միայն մէկ անգամ մը ութ օր Քրիստինէն չկրացաւ ելակ տանիլ ամբողջը, անոր համար Վարդուհին սիրտը քիչ մը կոտորեցաւ. որովհետեւ գարնան ամէն պտուղներէն աւելի՛ ելակը շատ կը սիրէր : Աւտի ութ օրէն ետքը՝ երբոր նորէն եկաւ Քրիստինէ ելակ բերելով, յանդիմանեց զինքը այնչափ ատեն չերեւալուն համար. կրնայի, ըսաւ, ուրիշէ ալ գնիլ, բայց լաւ սեպեցի որ սպասեմ քեզի. վասն զի քու բերած ելակներդ՝ ինծի աւելի ախորժելի են. ուստի թէ որ կ'ուզես ինծի հաճոյական բան ընել, ստէպ եկուր հոս :

Խեղճ Քրիստինէն աչքը արցունքով լեցուած — Յանցանք չունիմ ըսաւ, աս բանիս մէջ, կը ջանամ զհրամանքդ գոհ ընելու. որովհետեւ ելակին գինը առատա-

պէս կը վճարես ինձի : Սակայն իմ այս չափ ուշանալուս պատճառը խեղճ մօրս հիւանդութիւնը եղաւ , որ քանի մը ամիսէ ի վեր հիւանդ պատկած է , ու աս շարժու մէջ այնպէս ծանրացաւ՝ որ չէի կրնար և ոչ մէկ վայրկեան մը թողուլ զինքը , ու քովէն հեռանալ . իմ պարտքս էր իրեն քուլը կենալ , ու զինքը հոգալ , վասն զի ինձմէ զատ ուրիշ մէկը չունի աշխարհքիս մէջ որ իրեն կարօտութիւնը լեցնէ : Բայց որովհետեւ երէկ քիչ մը աղէկ էր , ու աս գիշեր ալ հանգիստ անցուց , անոր համար աս առաւօտ կանուխ ելայ քանի որ արևը չէր ծագած , գնացի ելակ ժողովելու . որպէս զի անոր ստրկուլը կարենամ քիչ մը կարագ գնել : Թէ որ ես գիպուածուլ ամէն օր ելակ չկարենամ բերել , կ'աղաչեմ ուրիշ կարծիքներու մ'երթար . վասն զի միայն իմ մօրս հիւանդութեան պատճառաւ զանց կ'առնեմ գալու :

— Խեղճ Բրիտանիէ , ըսաւ Վարդուհին սիրաբը ելելով , թողութիւն ըրէ գրեզ յանդի մանեղուս . տես թէ ինչպէս գէշ է բանի մը վրայ շուտուլ դատաստան ընելը , առանց ետեր առջեր մտածելու : Եսիկա

դաս մըն էր՝ որ դուն տուիր ինծի, թէ-  
սկէտե նոյնը՝ մայրս ալ շատ հեղ տուեր  
էր. ես զքեզ յանդիմանելու տեղը, սկէտք  
էր ցաւակից ըլլայի: Կնչո՞ւ համար առա-  
ջուց շուտ մը չիւնայուցիր ինծի՝ քու մօրդ  
հիւանդութիւնը. շատոնց մենք կրնայինք  
մխիթարել զինքը՝ ու ճար մը ընել իր հի-  
ւանդութեանը, մասն զի մայրս շատ կը  
սիրէ ուրիշին բարիք ընել:

Կը հաւատամ ըսած խօսքիդ, պատաս-  
խանեց Քրիստիանէն. որովհետեւ աս զեղին  
մէջ ամէնքը կը ճանչնան թէ ի՞նչ բարե-  
պաշտ խաթուն է Վալտէնեան տիկինը, և  
թէ ի՞նչպէս կը սիրէ աղքատները: Բայց  
ես մօրմէս լսեր եմ թէ սկէտք չէ գլծած  
մարդիկներուն բարերարութիւնովը զեղ-  
ծանիլ, և թէ ուրիշներուն ձեռքը չնայիլ  
ինչուան որ անկարող չըլլայ մէկը ինքիրեն  
դարման տանելու. ուստի մենք ալ ինչուան  
հիմայ կը ջանայինք՝ ուրիշին ծանրութիւն  
չտալ, թէսկէտ շատ աղքատութեամբ կ'ա-  
սրէինք, բայց դեռ յետին տնանկ աղքատ-  
ներու սկէս ողորմելի չինք, որոնք անբժըշ-  
կելի հիւանդութեանց մէջ իյնալով՝ բան  
չին կրնար ընել, որով կարհնան ստակ մաս-

տրկիլ . այսպիսիներուն մեր ձեռքէն եկածին շափ թէ որ ողորմութիւնը չնննք , յանցաւոր կը սեպուինք Աստուծոյ դիմացը :

Աս խօսքերը Վարդուհիին սիրտը շատ շարժեցին , որ ըսաւ Քրիստինէին՝ թէ . քիչ մը սպասէ իրեն , ինչուան որ ինքը իր մօրը խուցը երթայ ու դառնայ . քիչ մը անցնելէն ետե եկաւ , ու զՔրիստինէն իր մօրը խուցը հրամցուց :

Աստ զարմացաւ Քրիստինէն՝ երբոր ներս մտաւ , ու ապշած ասդիս անդին կը նայէր . վասն զի մտած խուցը գեղեցիկ զարդերով ու փայլուն ոսկեղօծ տախտակներով զարդարուած էր . մէջ տեղը հնդկափայտէ գրասեղան մը կար , վրան բաց է փառաւոր ժամացուցէ՝ շինծու ծաղկրներ ու արծրթէ աշտանակներ ալ կային . նոյն պէս զարդարուն էին աթոռները ու բազմուցը , կար նաև տեսակ տեսակ նուազարան ու մեծ հայլի մը՝ և այլն . և որովհետև Քրիստինէն բոլոր իր կենացը մէջ ասանկ բաներ չէր տեսած , անոր համար անոնց վրայ նայելէն չէր կշտանար :

Վ ալտէնեան խաթունը սիրով ընդունեց զինքը , և հարցուց անոր հիւանդ մօրը

Համար թէ ինչպէս է : Քրիստոսինէ պարզ  
մտութեամբ ու պատկառանքով կարգաւ  
պատմեց , ինչ որ Վարդուհիին պատմեր  
էր : Հանգիստ կեցիր , աղջիկս , ըսաւ ի-  
րեն Վալտէնեան խաթունը , կ'ուզեմ ա-  
ղէկ տեղեկութիւն մը առնել քու մօրդ  
վրայ , ըսէ ինծի նախ թէ ինչ է մօրդ ա-  
նունը :

— Իմ մօրս անունը Վերոնիքա է ,  
ըսաւ Քրիստոսինէն , ու մենք գեղին ծայրը  
եղած խրճիթին մէջ կը բնակինք . . . : Ա-  
սոնցմէ զատ՝ դեռ ուրիշ շատ բաներ հար-  
ցուց իրեն Վալտէնեան խաթունը . ետքը  
եղակին գինը էւելօք վճարեց , ու ամանով  
մը մսի ջուր տուաւ որ իր հիւանդ մօրը  
տանի :

Արբոր Քրիստոսինէն հեռացաւ ամբողջն ,  
Վալտէնեան խաթունը դարձաւ ըսաւ իր  
աղջկանը . կը տեսնաս Վարդուհի , թէ  
ինչպէս բարի դուստր է Քրիստոսինէն ,  
թէպէտեւ աղքատ է՝ սակայն շատ լաւ  
կերպ մը ունի . ինքը ձեռքէն եկածին չափ  
կը սիրէ իր մայրը և ասանկ մաքուր ու ան-  
կեղծ սիրտ մը աշխարհքիս մէջի ամէն բա-  
նորէն աւելի կ'արժէ : Իսէ ինծի դուս-



տրր , թէ որ ես ալ հիւանդանամ , անոր  
պէս յօժար սրտով պիտի հողանս զիս :

— Ասոր վրայ կը տարակուսիս , սիրելի  
մայր իմ , ըսաւ Վարդուհին , ու կը կար-  
ծես թէ իմ ջանքս ալ Քրիստոնէի ցու-  
ցուցածէն պակաս պիտի ըլլայ :

— Այլ , չիմ տարակուսիր , ըսաւ մայրը ,  
հասկա միայն ուղեցի դքեղ արթնցրնել  
աս աղքատ գեղջուկ աղջկանը գովելի վար-  
մունքովը , և իմայրնեղ թէ երբեմն մեծա-  
մեծ առաքինութիւններ կը գտուն աւելի  
խրճիթներու տակ , քան թէ պաշտաներու  
մէջ . աղքատութեան պատճառաւ՝ ասանկ  
մարդիկ շատ անգամ այնպէս աղէկ բնու-  
թիւն մը կ'ունենան , որ հարուստները կ'ա-  
մրջցրնեն . ահա աս է ան գովելի առա-  
քինութիւնը , որուն առջևը աշխարհքիս  
ամէն գանձերն ալ ոչինչ և ունայնու-  
թիւն են : Աստուած կ'ուզէ որ մենք եր-  
բեմն խրատ առնունք այսպիսի մարդիկ-  
ներէն , ու մեր հպարտութենէն ցածնանք  
խոնարհինք . նմանէ՛ աս աղջկանը՝ սիրելի  
Վարդուհի , ու ասոր պէս համեստ , առա-  
քինի եղեր , որով մէկ օր մը դուն ալ երջա-  
նիկ ըլլաս :

Արքայ Քրիստոսինէն տուն հասաւ , մեծ  
ուրախութեամբ պատմեց ինչ որ գլխէն  
անցեր էր : Ա երոնիքան լսելով թէ ինչ  
խոսամունքներ ըրեր է Ա ալտէնեան խա-  
թունը , ուրախութենէն՝ սկսաւ լալ . մին  
ջուրը , որուն մէկ մասը Քրիստոսինէն տաք-  
ցուցեր ու իր մօրը խմցուցեր էր , մեծ  
օգուտ ըրաւ հիւանդին . որ շնորհակալ  
եղաւ Աստուծոյ , թէ ինչպէս Ա ալտէնեան  
խաթունին ձեռքովը զինքը անխնամ չի  
թողուց իր հիւանդութեանը մէջ :

Ա երոնիքան դարձաւ իր աղջկանը՝  
հայէ՛ , ըսաւ , ինչպէս աշխարհքիս մէջ ա-  
մէն բան իրարու հետ կասկածելով ինչ ու-  
նին . դու աս առաւօտ կանուխ կըսր ան-  
կողինէդ՝ քանի որ արևը չէր ծագած , ու  
գնացիր ելակ ժողկելու : Աստուած օրհ-  
նեց զքեզ՝ քու հնազանդութեանդ համար .  
հանդիպեցար Ա ալտէնեան խաթունին աղ-  
ջկանը , ու անոր ձեռքովը իր մօրը դիմացն  
ալ ելար . քու սէրդ որով կը ջանաս զիս  
մխիթարելու մեծ տալաւորութիւն ըրաւ  
խաթունին , անոր համար քեզմէ մեր վի-  
ճակին վրայ տեղեկութիւն ուզեց ու ինծի  
մտի ջուր՝ և քիչ մը ստակ խաւրեց , որով



քանի մը որ կարենանք զմեզ հոգալ: Ասով  
կրնաս խմանալ թէ Աստուած ինչպէս կը  
սիրէ ան տղաքը, որ իրենց ծնողքը կը  
յարգեն ու անոնց կը հնազանդին. թէ որ  
դու ծոյլ ու անհնազանդ ըլլայիր, ու թէ  
որ աս առաւօտ կանուխ ջելլայիր՝ թէ դու  
կը զրկուէիր և թէ ես՝ ան բարկքներէն որ  
կրնանք ընդունիլ աս ազնիւ, բարեպաշտ  
ու առատաձեռն ընտանեաց ձեռքէն: Քու  
աշխատանքի ջանքդ ու սէրդ՝ որ իմ վրաս  
ունիս, մէկտեղ դալով, սրտածառ եղան  
որ Աստուած աս ամէն բարութիւններս ը-  
նէ մեզի. վասն զի ճշմարիտ է ան խօսքը  
թէ « Աստուած երեսէ չթողուր իր սիրելի-  
ները », : Աւստի թէ և ուշ, սակայն կը յու-  
սամ որ մէկ որ մը Այլտէնեան խաթու-  
նին ձեռքովը մեր բախտը պիտի բանի. ա-  
սոր համար սրտատական ենք փառք տալով  
չնորհակալ ըլլալ Աստուծոյ նախախնա-  
մութեանը, որ կ'ուզէ մեր չնչին բարեգոր-  
ծութեանցն ալ փոխարէն ընել, խմայրնե-  
լով թէ ինչպէս հաճոյական են իրեն .  
ուրեմն հաստատուն յուսով ապաւինինք  
իրեն, ինքը միայն կրնայ օգնել մեզի .  
ինքը անանկ բարի հայր մըն է, անանկ

Հաւատարիմ՝ ու Հաստատուն բարեկամ՝ որուն նմանը չի գտնուիր աս աշխարհքիս մէջ, և միշտ անոնց կ'ողորմի, որ իրեն կ'ապաւինին. ուստի թէ որ Հաւատարմութեամբ իրեն ծառայենք, ինքը զմեզ ձեռքէ չ'ընդունի, ու կը հողայ մեր ամէն կարօտութիւնը, ինչպէս որ ինչուան այս օրս հողացիք է :

Ասկէ ետքը Վերոնիքան սկսաւ կաւանց կամայ ոյժ առնել, ու թեթևալ Հիւանդութիւնը. վասն զի Աստուծոյ ողորմութեան վրայ ունեցած յոյսը իրեն սիրտ տուաւ, ու քաջալերեց. որովհետեւ իր տկարութեան գլխաւոր սրտաճառը իւր խեղճ միճակն էր. ու գիշեր ցորեկ կը մտածէր՝ թէ իրեն մեռնելէն ետեւ իր Քրիստոսինէ աղջկանը գլխուն արդեօք ինչ պիտի դայ : Բայց տեսնալով թէ ինչպէս օրէ օր Աստուծոյ ողորմութեամբը իրենց բանը կը յաջողի՝ ուրախութիւնէն ան ամէն մրտամտունքներէն խալըսեցաւ, որով մեծ յոյս ունեցաւ նաև իրեն կատարեալ առողջութիւնը գտնալու :

ԳԼՈՒԽ Գ.

Վարտեհեանս խարուշը հիշանդտեսի  
կ'երբայ .

ԵՐԿՐՈՐԴ օրը կիրակի ըլլալով  
Քրիստինէն իր մօրը ամէն հարկաւոր պի-  
տոյքը լմնցընելէն , ու խրճիթին կահ  
կարասիքը կարգաւորելէն ետե , գնաց գե-  
ղին եկեղեցին պատարագ տեսնելու . երբոր  
տուն դարձաւ , իր մօրը պատմեց ինչ որ  
մեծարգոյ ժողովրդապետին քարոզէն միտ-  
քը մնացեր էր , ուսկից շատ օգուտ քաղեր  
էր ինքը : Իրիկունը իր Վերոնիքա մօրը  
քով նստած՝ գիրք մը կը կարդար , որ կը  
սորվեցընէր թէ ինչպէս պէտք է մարդ  
գուժ ունենայ ուրիշին վրայ . և որպէս  
զի շուտ շուտ կարդալով՝ իր հիւանդ  
մօրը միտքը չյոզնեցնէ , սկսաւ հատիկ  
հատիկ ու ցած ձայնով կարդալ . և եր-  
բեմն երբեմն կը կենար , որպէս զի իմա-

նայ , տեսնայ թէ մայրը բան մը կ'ուզէ  
թէ չէ :

Մէյ մըն ալ յանկարծ դրսի դուռը  
բացուեցաւ , և Վալտէ'նեան խաթունը իր  
Վարդուհին աղջկանը հետ ներս մտան իւ  
րենց խուցը . հետերնին կողով մըն ալ ու  
նէին՝ որ վրան ծածկած էր :

Բարեսրաշտ խաթունը հիւանդին բարև  
տուաւ , ու անկողնին քովը նստաւ՝ հիւ  
ւանդութեանը ցաւակից ըլլալով . և եր  
բոր Բրիտտինէն գնաց Վարդուհին հա  
մար դրսէն աթոռ մը բերելու , Վալտէ  
նեան խաթունը խուցին մէջ աչուրնները  
ասդին անդին դարձուց՝ ուր որ ամէն  
բան կարգի դրած մաքուր էր . կաւէ  
սլտուկները մաքուր լուացած , խուցին գե  
տինը աւլած , սլատերը ճերմակ , անկո  
ղինը աղէկ շտկած . վերջապէս մէջ  
տեղը բան մըն ալ չկար՝ ամէն բան իր  
տեղն էր , որուն վրայ շատ զարմանալով  
խաթունը՝ հարցուց Վերոնիքային թէ  
ո՞վ հողացեր է զանոնք . Վերոնիքան  
ալ սրատափսան տուաւ թէ իմ Բրիտ  
տինէ դուստրս :

Խաթունը՝ շատ աղէկ ըսաւ , Բրիտտի

նէին ձեռքը բռնելով, շատ կը սիրեմ՝ ասանկ բարի սովորութիւններ տեսնալ անոնց վրայ որոնք որ քու հասակուիդ են . բայց ըսէ ինձի թէ ինչ գիրք է ձեռքինդ :

Պատասխան տուաւ Քրիստինէն թէ սուրբ Աստուածածնայ վարուցը նմանելու գիրք մըն է, ուսկից երբեմն երբեմն մէկ մէկ գլուխ կը կարդամ մօրս . որովհետեւ եկեղեցի չի կրնար երթալ հիւանդութեանը պատճառաւ . ասով աստուածային խօսքերէ զուրկ չի մնար ու իր ժամանակն ալ սլարապ չանցնիր :

— Հրամաներս խաթուն, վրայ տուաւ հիւանդն ալ, աս գրքուիւ մեծ օգուտ շահեցայ՝ և միջի գեղեցիկ խրատներուիւ հոգիս շատ զօրացաւ . ասկէ սորվեցայ թէ այէտք է Աստուծոյ մեզի ըրած երախտիքը միշտ յիշել ու ասպերախտ չըլլալ :

Իրաւունք ունիս ըսաւ խաթունը, թէ որ մենք չի ջանանք՝ հաւատոյ սուրբ բոցը վառ պահել մեր սրտին մէջ՝ հոգեւոր գրքեր կարդալով, հոգինիս կը ցամքի՝ երկնքի ցօղէն վրկուած տունկի մը պէս . բան մըն ալ չիկրնար հաւասարիլ ան ուրախութեան՝ որ կ'ըզգանք Աստուծոյ լաւ կեր-

սրով ծառայելով : Այս ամէն բան հիմայ  
փորձեցի . վասն զի դու քու հիւանդու-  
թեանդ մէջ հոգևոր գրքեր կարդալով , ա-  
նոնց խօսքերովը կը մխիթարուիս , ու աս  
ծանր հիւանդութեանդ սիրով կը համբե-  
րես . բայց ըսէ ինձի , աս գեղին մէջ  
մանչ տղայ ունեցեր ես . — Տղայ մը ու-  
նեցեր եմ , ըսաւ Ա երոնիքա , բայց ուրիշ  
գեղի մը մէջ . և աս կողմերը ետքէն եկայ  
իմ դժբաղդութեանցս պատճառաւ , թէ որ  
կ'ուզես լսել գլխէս անցած փոճանքնե-  
րը , սիրով կը պատմեմ հրամանոցդ :

— Անչո՞ւ չէ , ըսաւ խաթունը , բայց նայէ  
որ քեզ չի յոգնեցընես : Պատասխանեց Ա ե-  
րոնիքան , իմ ընկերս որ Ա եստ կ'ըսուէր ,  
հարուստ մարդու մը քով որսապետ էր .  
մեր սրսակուելէն ետե ութը տարի մէկ տեղ  
շատ գոհ ապրեցանք , ու իրարու հետ սի-  
րով էինք : Ատքը մեծ պատերազմ բացուե-  
լով մեր գեղը բոլորովին տակն ու վրայ  
եղաւ . վասն զի թշնամիները յախշտակե-  
ցին մեր ունեցածը . ան հարուստ պարո-  
նը , որուն քովն էր իմ սիրելի լծակիցս ,  
ուզեց փախչիլ ու ընկերս ալ մէկտեղ տա-  
նիլ՝ որ իրեն ծառայէ , ուստի ակամայ



բունադատուեցայ իրմէ բաժնուելու , և միայն աս Քրիստինէ դուստրս իմ քուլս մնաց , որ ան ատեն ինքը հազիւ թէ 18 ամսուան էր : Աս մէկզմէկէ բաժանումը շատ դառն եղաւ մեզի , ու շատ լացեր ենք . առջի բերան ընկերս գրեթէ ամէն ամիս թուղթ կը գրէր , սակայն մէյ մըն ալ որ մը լսեցի որ վիրաւորուեր է : Ա՛հ , թէ որ կարելի ըլլար թողիւ երթալ իր քուլը՝ զինքը խնամելու համար , անտարակոյս աս մեծ մխիթարութիւնը գտնէքիչ մը կը թեթեւցընէր իմ դժբախտութիւնս . բայց անկարելի եղաւ երթալը , և հազիւ թէ քանի մը որ անցաւ չանցաւ՝ նորէն յանկարծ լսեցի մահուան սև սգոյ լուրը : Աս թուն կրնաս իմանալ իմ սրտիս ցաւը , իրեն ողբալի մահուանը վրայ . աս մտմտուքը աւելի սաստկացուց իմ տրտմութիւնս թէ ի՞նչ պիտի ըլլայ ինձի և իմ աղջկանս . ու չէի գիտեր թէ ան պատերազմի ատեն , որ մեր հայրենիքը բոլորովին կործանուելու վրայ էր՝ ես ի՞նչ պիտի ընեմ առանց օգնականի : Միտքս դրի որ հօրեղբարցս երթամ , բայց վա՛յ ինձի , լսեցի որ իրենք ալ բոլոր ընտանիքով

պլըշտկող հիւանդութենէ մը մեռեր են .  
ասանկ դժբաղդութեամբ՝ որ բերնով չեմ  
կրնար պատմել , շատ գաւառներ պտըտե-  
ցայ տեղ մը գտնելու համար : Թի՛ որ  
մինակ եղած ըլլայի՝ աւելի դիւրութեամբ  
կրնայի ինքզինքս հոգալ , ինչու որ և ոչ  
մէկը ուզեց զաւելուլս մէկտեղ իր քովը  
առնել : Այսպիսի դժբաղդութեամբ ունե-  
ղութեամբ հինգ ամսէն ետքը՝ իրիկուն մը  
աս պղտիկ գեղս հասայ , ու իմ դժբաղդ-  
վիճակս մէկ քանի հոգւոյ պատմեցի , ո-  
րոնք աս պղտի տնակը բնակելու հա-  
մար ինծի տուին , այս դաշինքով որ շաբ-  
թու մէջ մէկ քանի ժամ՝ գեղին պղտիկ  
աղջիկներուն կար կարել , և դուրպայ հիւ-  
սել սորվեցրնեմ : Միրով յանձն առի աս  
ճառայութիւնը , և սկսայ յօժարութեամբ  
կատարել այս պաշտօնս . սակայն հիմայ  
հիւանդութեանս պատճառաւ արգիլուե-  
ցայ : Աս խրճիթը առած ժամանակս  
բան մըն ալ չունէի , բայց Աստուծոյ նա-  
խախնամութիւնը զիս ձեռքէ չի թողուց  
ինչուան աս օրս , և կը յուսամ որ այս-  
չափ ժամանակ զիս փորձելէն ետե՛ որ  
մը չէ՛ նէ մէկ օր մը կը մխիթարէ զիս :

Աս այսչափ նեղութիւններուն մէջ ամեն  
նեխն տրտունջ մը ունեցած չիմ, հասպա  
ինքզինքս Աստուծոյ սուրբ կամայք յանձ  
նեցի :

Վալտէնեան խաթունը՝ լուծեամբ  
մտիկ կ'ընէր խեղճ Վերոնիքային պատ  
մութիւնը . և լսելով անոր գլխուն եկած  
գժբաղդութիւնը՝ աչուրները արցունքով  
լեցուեցան . Վերոնիքա տեսնելով անոր սրը  
տին վրայ եղած տպաւորութիւնը, թողու  
թիւն ուզեց իրմէ որ իր պատմութեամբ վըշ  
տացուց զխաթունը : Սակայն Վալտէնեան  
տիկինը պատասխան տուաւ թէ՛ միայն  
քու գժբախտութեանդ վրայ չէր որ սիրտս  
եղաւ, ու սկսայ լալ . հասպա յիշեցի իմ  
գլխէս անցած վշտերն ու գժբաղդութիւն  
ներն ալ, որ քու քաշածներուդ շատ կը  
նմանին : Աս ալ քեզի պէս զրկուեցայ իմ  
սիրելի ընկերէս, հօրմէս, մօրմէս ու իմ  
մէկ հատիկ զաւկէս՝ որն որ ինձի օր մը  
ձեռնտու և մխիթարութիւն պիտի ըլլար :  
Իմ ընկերս ձիաւոր զօրաց գունդի մը հա  
զարապետ էր . պատերազմի մէջ՝ ուր որ  
լնքը զօրաց գլուխ կեցած մեծ քաջութիւն  
ներ կ'ընէր, վիրաւորուեցաւ . լսելով այս

ցաւալի լուրը , մէկէն ճամբայ ինկայ՝ իր  
քովը երթալու դարմանելու զինքը , իմ եր-  
կու որդիքներուս . բայց հազիւ թէ հասայ  
քովը , ու մէկ քանի խօսք կրցայ զրուցել ,  
գրկիս մէջ հոգին աւանդեց : Ատքը երբոր  
խնայայ թէ ընկերոջս կողմը եղած զօրքերը՝  
շատ ջարդ կերած , գրեթէ բոլորովին յաղ-  
թուեր են , ես ալ մտածեցի որ նորէն հայ-  
րենիքս դառնամ . սակայն հազիւ թէ քա-  
նի մը մզնն տեղ գնացեր էի , տեսայ որ  
մեր զօրքը փախչող փախչողի է եղեր :  
Ա արդուհի դուստրս ու իր սղտի եղբայ-  
րը՝ որ հազիւ թէ չորս տարուան կար հետս  
առած շատ աշխատանքով՝ հասանք Քլին  
անունով գետի մը եզերքը . կամուրջին  
վրայ անցուոր փախչողներով այնպէս լե-  
ցուեր էր , որ անտարակոյս փորձանքի կը  
հանդիպէինք՝ թէ որ մենք ալ անկէ անց-  
նիլ ուզինայինք : Թշնամիները յաղթող  
գտնուելով՝ սխեր էին փախչողներուն ե-  
տեէն իյնալ ու հալածել զիրենք . թըն-  
դանօթներուն ձայնը ամէն դի բռնած էր  
ու մարդկան կորսուելու վտանգները քանի  
կ'երթար կը շատնար . սս խառնափնդոր  
շիտթութեան մէջ՝ տեսայ որ քանի մը զե-

նուոր նաւակ մը գտած , գետին մէկալ  
կողմը կ'ուզին անցնիլ , աղաչեցի որ տղոյ  
մովս զիս ալ նաւակին մէջ առնեն . թէ  
պէտեւ առաջ ոմանք դէմ կեցան , բայց  
վերջը հաւանեցան : Նաւակին մէջի մար  
դիկը մէջերնին վէճ մը ունենալով այնպէս  
իրարու հակառակեցան ու բանը այնպէս  
տաքցաւ , որ մոռցան նաւակը կառավա  
րելը , և ջուրն ալ սկսաւ քշել տանիլ զմեզ ,  
քիչ էր մնացեր որ ամէնքնիս ալ կը խորդ  
դուէինք : Ան ատեն մէկ քաջ սպայ մը  
որ գետին մէկալ կողմը կեցեր էր , ըտլով  
մեր սրտալուն ձայնը , ու խորուելու փոր  
ձանքը՝ մէկէն իրեն նաւակը մարդիկներով  
դրկեց օդնութեան . մենք ալ առջի նաւա  
կէն հոն ցատքեցինք , ու նոյն նաւակը  
քիչ մը ետքը ընկղմեցաւ ջրին մէջ : Աղջի  
կըս գիրկս էր , բայց մէկալ որդիս՝ ինչ  
պէս եղաւ չեմ գիտեր գլորեցաւ ջուրը .  
աս բանս տեսնալուս պէս ինքզինքս կոր  
սրնցուցի և չեմ գիտեր թէ ետքը ինծի  
ինչ եղաւ . միայն այսչափ գիտեմ որ երբ  
զգաստացայ՝ ինքզինքս մէկ ծառի մը  
տակ գտայ գրեթէ մեռած վիճակի մէջ .  
բովս կեցեր էր Վարդուհի գուստրս որ

կու լար : Այոն միջոցին տեսանք որ մէկը  
կառքով կ'անցնէր , աղաչեցինք որ զմեզ  
ալ առնէ իր կառքին մէջ , ու սիրով ըն-  
դունեց զմեզ . և այսպէս հեռացանք ան սլա-  
տերազմին ահաւոր դաշտէն , ու ամենուին  
չիկրցայ տեղեկութիւն մը առնելու կոր-  
սուած որդւոյս վրայօք թէ ջրին մէջ խեղ-  
դուեցաւ ինչ եղաւ : Աս ողբալի դիպուա-  
ծէն քիչ մը ետքը ծանր հիւանդութեամբ  
անկողին ինկայ , ուսկից շատ ուշ ու  
դժուար խաղբսեցայ , կը մտածէի թէ իմ  
վերջս շատ թշուառ ողորմելի պիտի ըլլայ .  
վասն զի որդի չմնայ՝ որ կարենայի ա-  
նոր ձեռքովը ընկերոջս ամէն թողուցածնե-  
րը ձեռք բերել : Ա իրջապէս շատ աշխատե-  
լէն ետև քիչ մը թոշակ կապեցին ինձի ,  
ու ամբոցին մէկ կողմը բնակեղու համար  
տուն մը տուին . շատ տարի է որ աս տա-  
նը մէջ կը բնակիմ , թէպէտ հանդարտ  
հանգիստ եմ , սակայն հիմակուան վիճակս  
առջինին հետ չի բաղդատուիր : Հիմայ  
միայն կը ջանամ որ աղէկ կըլծեմ աս մէկ  
հատիկ աղջիկ զաւակս , ու սիրով համ-  
բերեմ ամէն օրուան նեղութեանցը՝ զո-  
րոնք Աստուած ամենաբարին կը խաւրէ



վրաս , որպէս զի համբերութեամբ ան-  
դիի աշխարհքին մէջ փառքս աւելցնեմ .  
պէտք է որ փորձութեանց յաղթեմ , որ-  
պէս զի արժանի ըլլամ յաւիտենական  
երջանկութեան , ու վարձք առնելու Աս-  
տուծմէ :

Ո՛վ գիտէ , թերևս առջի ունեցած եր-  
ջանկութեանցս մէջ մոռնայի Աստուծոյ  
պատուիրանքները , ու հեռանայի իրմէ .  
իսկ հիմայ ձախորդութեանց մէջ իյնալով  
աւելի կասկուած եմ իրեն հետ , ու աւելի  
աղէկ կրնամ ճանչնալ աշխարհքիս ունայ  
նութիւնը :

Իրիկունը մօտենալով Վարտէնեան  
խաթունը վախցաւ որ չըլլայ թէ հիւանդը  
շատ յոգնեցրնէ , ելաւ՝ մնաք բարուի՛ր ըսաւ  
իրեն . բայց դեռ չգնացած հարցուց թէ  
ո՞ր բժիշկը կանչեցիր որ քեզի դեղ մը ընէ :  
Պատասխան տուաւ Վերոնիքան թէ՛ և  
ոչ մէկը . վասն զի նախ կը կարծէի որ  
միայն կերակրէ՛ զգուշանալով ու հանդիստ  
կենալով պիտի առողջանամ , և դեռ չեմ  
առողջացած՝ ինչպէս որ կը փափաքէի . և  
երկրորդ՝ կարողութիւնս չունէի լաւ բժիշկ  
մը կանչելու , և չուզեցի ինքիր դիտուս

դեղ առնել, և ոչ մեր շատախօս բժշկին  
ինքզինքս հաւտայ: Իրաւունք ունիս, կրրկ  
նեց խաթունը, որովհետև փորձանքա  
ւոր բան է անհմուտ բժշկի ձեռք իյնալը.  
ես վաղը կը դրեմ իմ բժշկիս, ու կ'ա  
յլրապրեմ որ ինքը քովդ գայ. և յու  
սամ որ անով հիւանդութեանդ վրայ տար  
բերութիւն մը կ'ըլլայ: Ատքը դարձաւ  
Քրիստինէին ըսաւ, սիրով հոգա՛ ու  
խնամքդ անպակաս ըլլայ մօրդ վրայէն,  
և ամէն առաւօտ եկուր ամրոցը մեզի  
խնայրնելու իրեն վիճակը. ես քեզի կե  
րակուր և ամէն հարկաւոր եղածը կը  
ճարեմ:

Քրիստինէն խոստացաւ կատարելու,  
ու դնաց մէկ քանի վարդ, շահաբրամ,  
կակաչ և ուրիշ ծաղկրներ փրցուց՝ բերաւ  
Վարդուհիին տուաւ, ան ալ մեծ շնորհա  
կալութեամբ առաւ ծաղկրները Քրիստի  
նէին ձեռքէն. ետքը Քրիստինէն զիրենք  
ճամբու դրաւ ինչուան իրենց ամրոցը:  
Գեղեցիկ իրիկուն մըն էր և բոլոր աշ  
խարհք խնտուամի մէջ. իսկ ազնուական ու  
բարեպաշտ Վալտէնեան խաթունին սիրտը  
անպատմելի շարժած՝ տառապեալ հիւանդ

Վ երոնիքային վրայ . նոյնպէս և Վ երոնի-  
քան՝ խաթունին խոնարհ ու ազնուական  
բնութեանը վրայ շատ զարմացած՝ անդա-  
դար կ'օրհնէր զՄատուած որ զինքը երեսէ  
չի լծողուց :



## ԳԼՈՒԽ Դ

Քրիստոսինէի պարգևը .

Չ'ի մտոյաւ Քրիստոսինէն ամէն օր ամբողջը երթալ իր մօրը վիճակը իմացնելու Վ ալտէնեան խաթունին . խաթունին խոստացածին պէս բժիշկն ալ եկաւ հիւանդը տեսնալու՝ և ուրիշ դեղեր սլատուիլ ընելու , զորոնք որ նոյնպէս խաթունը գնել տուաւ : Աւ այսպէս անընդհատ սկսաւ բժիշկը հիւանդին այցելութիւն ընել , ու տեսակ տեսակ դեղեր տալ իրեն . Աստուծոյ յաջողելուլը՝ աս դեղերը քիչ ժամանակուան մէջ՝ ոյժ տուին Վ երոնիքային , և հիւանդութիւնը սկսաւ թեթեւալ , ու կամայ կամայ առողջանալ . անանկ որ քիչ քիչ սկսաւ իր առտնին զբաղմանցը հետ ըլլալ : Օր մը Վ երոնիքան երբոր պատուհանին քով նստած գուրպայ կը հիւսէր , տեսաւ իր ազնուական ու բարե-

պաշտ բարեբարը որ դէպ ի խրճիթը  
կուգար, շուտ մը վաղեց խաթունին  
դիմացը ելաւ՝ զինքը ընդունելու հա-  
մար. և անպատմելի ուրախութեամբ լե-  
ցուած՝ անոր շատ շնորհակալութեան խօս-  
քեր ըսելով՝ շնորհակալ կ'ըլլար անոր բա-  
րիսէր խնամոցը վրայ. ու երախտագիտու-  
թեան արցունքը մարգարտի պէս խեղճին  
աչքերէն կը վաղէին: Այս խաթունը աղաչեց՝  
որ չկայ. վասն զի, ըսաւ, թէ՛ որ քեզի ա-  
ղէկութիւն մը ըրած եմ՝ անով պարտքս  
կատարած կը սեպուիմ. անոր համար աչ-  
խարհք եկեր ենք որ ձեռքերնէս եկածին  
չափ իրարու օգնենք. ուստի հիմայ ես որ  
քան զքեզ քիչ մը աւելի հարուստ կ'երե-  
նամ, պէտք է որչափ որ կրնամ օգնեմ  
քեզի՝ կարօտութեանդ մէջ: Անչպէս ես  
ալ երբոր նեղութիւններու և վշտերու մէջ  
էի՝ ուրիշ օգնութեանը կարօտեցայ: Ա-  
նանկ է նէ փոխենք խօսակցութիւննիս ու-  
րիշ նիւթի վրայ, ու մեր աղջիկներն ալ  
երթան պարտէզը գուարճանալու. աս ը-  
սելով դնաց Վերոնիքային քովը նստաւ:  
Վարդուհին և Քրիստինէն պարտէզ  
իջնալով, և հոն խաղալ խնտալէն ետքը եր-

կուրքը մէկտեղ գնացին Քրիստինէին ոչ  
խարը տեսնելու . սիրուն կենդանին իր  
տէրը տեսնելով՝ սկսաւ ուրախութենէն  
վեր վեր ցատքել : Արդուհին շատ սի-  
րեց ոչխարը , ու շատ զարմացաւ ա-  
նոր ընտանութեան վրայ . ա՛հ երբ պի-  
տոր ըլլայ՝ որ ես ալ ասոր նման ոչխար մը  
ունենամ ըսաւ , և խոստացաւ որ երբեմն  
երբեմն պիտի գայ ոչխարին հետ զուար-  
ճանալու , սրովհետեւ այն իրիկուան զօ-  
սանքը իրեն շատ հաճոյ անցաւ :

Իսկ խրճիթին մէջ Այլտէնեան խա-  
թունը ու Աերոնիքան իրենց բանին գործ-  
քին վրայ խօսելով՝ անցուցին ան իրիկու-  
նը : Տիկինը շատ զարմանալով Աերոնի-  
քային կրթուած մտքին , ուղիղ սկզբանց  
ու խօսքերուն վրայ կ'ապշէր ու կը հիա-  
նար : Շատ խօսակցութիւններէն ետե՛  
խնայան թէ մէկզմէկ շատոնց կը ճանչնան  
եղեր . ուստի սկսան ուրախանալ , ու Աս-  
տուծոյ փառք տալ որ նորէն արժանի և  
զան իրար տեսնալ և իրարու հետ խօսիլ :  
Ասանկ երկայն բարակ խօսակցութիւն-  
ներով իրիկունը ուշ ատեն բաժնուեցան  
մէկմէկէ :



Վարդէնեան տիկինն ու Վարդուհին  
երբոր իրենց ամրոցը դարձան, Քրիստի-  
նէն իր մօրը սլատմեց թէ ինչպէս ուրա-  
խացաւ Վարդուհին՝ ոչխարը տեսնելուն  
համար, և թէ խոստացաւ երբեմն երբեմն  
գալ, ու անով զբօսնուլ. ես ալ խօսք  
տուի, ըսաւ, որ երբեմն ամրոցը տանիմ  
ոչխարը, և յուսամ որ հրամայքդ ալ այս  
բանիս դէմ չես կենար. և կարծեմ որ  
ասով իրեն հաճոյական բան մը ըրած  
կ'ը լանք: — Ետ լաւ մտածեր ես Քրիս-  
տինէ, ըրաւ իրեն մայրը, չէ թէ դէմ չեմ  
կենար աս բանիս, հասկա կը յորդորեմ  
ալ դքեզ որ սիրով ընես այդ աղէկութիւ-  
նը: Սիրելի դուստրս, մեր կեանքը ստուե-  
րի պէս կ'անցնի, նոյնպէս և աշխարհքիս  
ունայնութիւնը. ուրեմն աս գիտնալով  
պէտք է աշխարհքիս մէջի չարչարանքներն  
ու իշտերը սիրով քաշենք, ու մեր վրայ ե-  
կած դժբաղդութիւններուն սիրով համբե-  
րենք: Այրանի՛ ան մարդուն որ կրնայ իշ-  
խել իր անձին վրայ, ու ետ կենալ չար սո-  
վորութիւններէ. վասն զի մահացեալ մար-  
դը՝ իր անձին յաղթելու համար քիչ դը-  
ժուարութիւն կը քաշէ: Վխտիս որ մենք

շատ բան սլարտրկան ենք Վ աշտէնեան  
խաթունին , և կարծեմ թէ ինչ ալ որ  
ընենք՝ չենք կրնար անոր երախտեացը փո-  
խարէն հատուցանել . միայն կը մտածեմ  
որ մեր կողմանէ իրեն ուրիշ հաճոյական  
բան մը ընենք :

Քրիստինէն դարձաւ իր մօրը , միայրդ  
հասկըցայ ըսաւ , կ'ուզես որ մեր ոչ  
խարը Վ արդուհին ընծայ ընեմ . ըս-  
կ'ըլլայ , մաղը առաւօտ կը տանիմ իրեն .  
թէպէտ և սիրտս շատ պիտի կոտորի՝ ինչ  
պէս որ դիտես , բայց հրամանքիդ ա-  
ռողջութեանը համար ամէն զոհ սլարտր-  
կան եմ ընելու . ուստի աս պզտի հաճոյա-  
կան ընծան ալ սիրով կ'ընեմ : Մայրը  
համբուրելով իր սիրական դուստրը , ինչ  
ազնիւ սիրտ ու մտածմունքներ ունիս , ը-  
սաւ , որոնցմով ինձի մեծ մխիթարու-  
թեան պատճառ կ'ըլլաս : Վ երոնիքան  
կտոր մը կարմիր թաւիչ առաւ ժապաւինի  
լայնութեամբ , ու վրան ասեղով երկու Վ .  
Վ տանդուխտ առեր բանեցաւ , որոնք  
վարդուհի վարտեհեաւս կը նշանակէին :  
և աս բանուած ժապաւէնը ոչխարին վնաս  
անյուշ :

Արկրորդ օրը կանուխկեկ ելաւ Քրիստինէ՛, ամանի մը մէջ ջուր լեցուց, ու ոչխարը աղէկ մը լուաց . ետքը կերակուր տուաւ և վրան չորցուց, կարմիր վնոյն ալ անցուց, ինքն ալ զգետար փոխեց՝ մաքուր հագաւ և սկսաւ դէպ ի ամբողջ երթալ ոչխարը հետը առած : Թէ՛պէտև ինքը շատ ուրախացաւ որ Արդուհին պիտի ընծայէ ոչխարը, բայց երբոր կը մտածէր թէ՛ իր միակ զուարճութենէն ալ պիտի զրկուի, սիրտը շատ տակնու վրայ կ'ըլլար . վասն զի աշխարհքիս մէջ մօրմէն ետքը անոր վրայ չափէ դուրս սէր մը ունեցեր էր : Բայց մօրը խօսքէն դուրս չեղ լիւ համար ամէն բան աչք առած էր առարինի աղջիկը :

Ապտէնեան խաթունին խոհարարը խոհանոցի դրանը առջև նստած ընդեղէններ կը մաքրէր, տեսնելով թէ Քրիստինէն դէպ ի իրենց կու գայ, խմացաւ ինչ բանի համար ըլլալը . ելաւ նստած տեղէն, և առանց խօսք մը զրուցելու, բացաւ խուցին դուռը՝ ուր որ խաթունը բան կը կարէր, ու Արդուհին ալ քովը նստած գիւրք մը կը կարգար :

Քրիստինէն միայն ներս մտաւ անոնց  
 հետ տեսնուելու՝ խօսելու, և ոչխարը դրու-  
 նէն դուրս թողուց. բայց կենդանին տե-  
 սաւ որ տէրը կ'ուշանայ՝ մայելով վազեց  
 խուցէն ներս մտաւ : Դատ զարմացաւ  
 Վարդուհին ոչխարը տեսնելուն, ու մէկէն  
 ձեռքը եղած գիրքը մէկզի ձգեց՝ գնաց  
 մօտեցաւ ոչխարին ու սկսաւ սիրել, շոյել  
 ու պագնել. ս'հ, ինչ սիրուն կենդանի  
 է կ'ըսէր, ինչպէս ձերմակ է բուրդը,  
 կ'երևնայ որ վրան լուացեր են. ինչպէս  
 ալ յարմարեր է թաւիշէ կարմիր վզնոյը,  
 ու իմ անունս ալ վրան գրուած է. ու-  
 բեմն ոչխարը իմն պիտի ըլլայ : Ինչդ՝  
 Քրիստինէ, ինչպէս կրնաս զրկուիլ աս  
 սիրուն ոչխարէդ, ու ինձի ընծայել :

Քրիստինէն խուցին դրան քով կեցած,  
 մեծ ուրախութեան միջ էր, տեսնելով թէ  
 ինչպէս հաճոյական եղաւ Վարդուհին իր  
 ընծան. թէպէտև ոչխարը իրեն ամենա-  
 սիրելի էր : Ընոր համար Վարդուհին իր  
 առջի խօսքը կրկնեց թէ — Մտե՛լիդ Քրիս-  
 տինէ, ինչպէս կ'ուզես ոչխարը ինձի պար-  
 գնել, որ այնչափ սաստիկ կը սիրէ իր զնե-  
 քը. այս բանս աղէկ չես մտածած, վասն

զի այս ոչխարուլս շատ մեծ օգուտներ կըր-  
նայիր քաղելու , և անիկայ ինծի տալով  
ամէն բանէ պիտի զրկուիս : — Խնդրեմ  
սիրով ընդունեցէք աս իմ դայզն պար-  
զես , ըսաւ Քրիստինէն . վասն զի իմ մօրս  
առողջանալուն պատճառը դուք եղաք , որ  
աշխարհքիս մէջ ամէն բանէն աւելի սիրելի  
է ինծի : Պատասխանեց Ա արդուհին , —  
Հասկա մայրդ գիտէ՞ որ դուն կ'ուզես զըր-  
կուիլ քու սիրուն ոչխարէդ : — Հրամաներ  
ես գիտէ , ըսաւ Քրիստինէն . և մանաւանդ  
թէ ինքը տուաւ ինծի աս խորհուրդը :

Խաթունը զարմանալով խորհուրդ տը-  
ւաւ իր աղջկանը որ սիրով ընդունի Քրիս-  
տինէին պարգևը . ես անոր փոխարէնը ,  
ըսաւ , ուրիշ առթով մը կը հատուցանեմ :  
Ըն ատեն Ա արդուհին Քրիստինէին հետ  
պագտուելով՝ շատ շնորհակալ եղաւ աս  
պարգևին համար : Խաթունն ալ բա-  
ցաւ իր գրաւեղանը , ու մէկ ոսկի դահե-  
կան մը հանելով տուաւ Քրիստինէին .  
— Ըն ու պահէ , ըսաւ , աս ոսկին իբրև  
պզտի նշան մը սիրոյ իմ ու Ա արդուհիի  
կողմանէ , դահեկանին միայ տալուած էր  
դառնուկի մը կերպարանք : Քրիստինէն

որ ոսկի դահեկան ամենեկին չէր տեսած՝  
 շատ զարմացաւ , և կը կարծէր թէ ոսկին  
 առնելով ոչխարը ծախած կը սեպուի . ա-  
 նոր համար բոլորովին խօսքը բերնէն հա-  
 տաւ , ու սիրտը ելելով ըսաւ խաթունին .  
 Ո՛հ , չէ խաթուն , չեմ կրնար առնել այդ  
 ոսկին : Վ ասն զի ոչխարը Վ արդուհին  
 սրարդեկուն համար , ինչ հաճոյք և ու-  
 թախութիւն զգացի , բոլորովին կը կորսն-  
 ցընեմ . որովհետեւ անով կերպով մը շա-  
 հախնդրութիւն ըրած կը սեպուիմ . գիտէ  
 Մատուած , որ ամենեկին առանկ մտած-  
 մունք մտքէս ալ անցած չէ , այլ միայն  
 ձեր ըրած բարերարութիւնը ինձի աս ընել  
 տուաւ . կ'աղաչեմ խաթուն նորէն տեղը  
 դնէք ոսկին , վասն զի սիրտի շառնեմ :

Վ ալտէնեան տիկինը շատ տտիպելէն  
 ետքը երբոր տեսաւ թէ չի կրնար զինքը  
 համոզել , և ամէն բան անօգուտ է . որով-  
 հետեւ Քրիստինէն իր մտքին վրայ հաստատ  
 կեցած էր , խաթունը ոսկին նորէն իր  
 գրասեղանին մէջ դրաւ , ու Քրիստինէին  
 ձեռքէն բռնելով ըսաւ : — Արովհետեւ դու  
 այսպէս վսեմ մտածութիւններ ունիս , ես  
 անոնց դէմ չեմ կրնար , միայն կը վախա-



քիմ որ քու ունեցած բարեկամութիւնդ ու սէրդ իմ աղջկանս հետ՝ ասկէ ետքն ալ շարունակուի . ինքը քեզմէ լաւ ընկեր չի կրնար գտնալ : Բու ունեցած սկզբունքներդ անանկ ուղիղ և առաքինական են , որ ընկերութիւն ընելուդ՝ իրենն ՚տանդ մը չի կրնար ըլլալ . ամէն օր ամբոյր եկու և հանգստեան ժամանակդ իրենն հետ անցուր . ես մասնաւոր կերպով պիտի ջանամ մօրդ միճակն ալ կարգի մը դնել , վասն զի մայրդ ալ , դուն ալ արժանի էք ամէն բանի : Զի մօռնաս եկուք ամէն օր տեսնելու դմեղ , ու հիմայ շատ շատ բարեւ ընես մօրդ մեր կողմանէ :

Քրիստիանէին սիրտը ելած՝ պաղաւ Վալտէնեան խաթունին ձեռքը , և մեծ ուրախութեամբ իր տղանք գարձաւ . և համներուն պէս՝ սկսաւ ամէն բան տեղն ի տեղը պատմել իր մօրը : Բարի մայրն ալ լսելով շատ ուրախացաւ իր աղջկանը առաքինութեամբ ըրած յաղթանակին վրայ . ուրախացաւ նաև ասոր վրայ ալ որ Վարդուհին իրենն հետ շարունակեալ բարեկամութիւն պիտի ունենայ , անոր համար լաւաւ Քրիստիանէին : — Այլ սիրելի, Վար-

դուճիին հարստութիւնը զքեզ չի երջանու  
կացներ, այլ միայն իր առաքինութիւնն  
ու կրթութիւնը, ուստի դու աս ընկերու  
թենէն շատ բան կրնաս շահիլ: Պարտքեր  
նիս է անմեղութեան ու բարեպաշտութեան  
վտանգ բերող ընկերութենէ փախչիլ, և  
առաքինի մարդկանց բարի օրինակովը  
զմեզ շտկիլ. իմաստուն և բարեպաշտ  
բարեկամ մը պատուական գանձ մըն է  
մարդուս՝ որ հազիւ թէ հազարին մէ  
ջէն մէկը կը գտուի. գտնալէն ետքն ալ  
պէտք չէ մէկէն անոր հետ չափէն աւելի  
ընտանեանալ: Ասան զի շատ անգամ ար  
տաքին երեոյթը խաբէական կ'ըլլայ, թէ  
և մեզի արտաքուստ այնպէս երևնայ թէ  
լաւ լաւ կատարելութիւններ ունին. բայց  
ետքէն կը յայտնուի որ ըրածնին բոլորո  
վին կեղծաւորութիւն է եղեր: Սակայն  
որովհետև Արդուճին այնպիսի անձն  
չէ, ջանայ այնպէս վարուիլ որ բա  
րի խորհրդով իրարմէ օգնուիք, իրարու  
համբերէք, և մէկմէկու վրայ գտնուած  
առաքինութեանց նախանձ մը ունենաք,  
որով երկուքնիդ ալ շահուիք: Ես բանիս  
համար մասնաւորապէս երկուքնիս ալ

պարտական ենք շնորհակալ ըլլալու Աստուծոյ տեսչութեանը , որ զմեզ ամէն կերպով կը խնամէ , ցուցնելով իրեն սէրը ու գութը որ ունի մեր վրայ . ուրեմն մենք որ օրուան վրայ ջանանք ջերմեռանդն սրտով սիրելու զԱստուած : Բրիտանիէն պատկառանքով և ուշադրութեամբ՝ մտիկ ըրաւ մօրը խրատները , և խոստացաւ կատարել զանոնք :



## ԳԼՈՒԽ Ե

Օտարական պատանի մը .

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ հաւասար էր թէ  
ամբոյին մջ և թէ խրճիթը , և Վար-  
դուհին ու Քրիստինէն իրենք զիրենք եր-  
ջանիկ կը սեպէին իրարու հետ ասանկ սի-  
րով կապուելուն համար . խկ Վալտե-  
նեան խաթունն ու Վերոնիքան տեսնե-  
լով իրենց զաւակացը՝ անմեղ երջանկու-  
թիւնը շատ կ'ուրախանային , մանաւանդ  
Վալտենեան խաթունը իր աղջկանը ա-  
սանկ աղէկ ընկեր մը գտնելուն համար :  
Վասն զի խաթունը թէպէտ առաջ ալ  
Քրիստինէին առաքինութեանց վրայ մեծ  
համարմունք ունէր , բայց ոչխարին դի-  
պուածովը կրկնապատիկ շատցաւ . ու երբոր  
լսեց թէ ոչխարին վընոցը իր մայրը բաներ  
է՛ աւելի ուրախացաւ : Անկէ ետքը սկսաւ  
շարունակ անոր բանելու նիւթ տալ , և

բոլոր դաւառին հարուտ տնեցոց ալ իմա-  
յուց, թէ Վ երոնիքայի ձեռքէն ինչ աղէկ  
բան բանիլ կուգայ. և ամէնքը անկէ հոքը  
անոր տուին իրենց կարիչու բաները, որով  
Վ երոնիքան ամէն շաբաթ շատ ստակ վաւ-  
տրկելով, վերջապէս խալըսեցաւ իր խեղճ  
ու թշուառ վիճակէն :

Ղշմարիտ ու անշահասէր բարեկամու-  
թեան մէկ գլխաւոր արդիւնքն այն է, որ  
ժամանակ անցնելով ու մանաւանդ ներդու-  
թեանց մէջ աւելի կը հաստատուի ու կը  
զօրանայ : Ասանկ առաքինի հիման մը  
վրայ հաստատուած էր Վ ալտէնեան խա-  
թունին և Վ երոնիքայի բարեկամական սէ-  
րը. աղնուական տիկինը նախատինք չէր  
սեպեր իր սլառուոյն՝ շատ անգամ իր բա-  
րեկամին խրճիթը երթալը, թէ և քանի  
մը բամբասասէր մարդիկ զինքը վար կը  
զարնէին ու կ'արհամարհէին : Վակայն  
ինքը սլառասխան կուտար անոնց՝ թէ եր-  
կուքներուս ալ ընկերը զինուորական մար-  
դիկ էին, ու երկուսն ալ հայրենեաց հա-  
մար իրենց կեանքը զոհեցին. անոր համար  
ստէպ կ'երթամ Վ երոնիքային քով՝ որ  
իրարմով մխիթարուինք. քիչ շատ երկուք-

նուս ալ վնճակը իրարու նման ըլլալով .  
ինքն ալ ինծի պէս այրի է , ու մէկ դուստր  
մը ունի ինչպէս ես . և սա մեր զակրները  
իրարու հետ այնպէս սիրով են՝ որ կարծես  
թէ մէկ քոյր ըլլային . ինքզինքս երջանիկ  
կըսեալէի թէ որ Վարդուհիս Քրիստինէին  
պէս բարեսիրտ և բարեկիրթ ըլլար . ես  
ալ անոր Վերոնիքա մօրը բարեպաշտու  
թիւնը ունենայի : Իսկ վնճակի զանազան  
նութիւնը ամենեւին արգելք պիտի չըլլան  
մէկզմէկ սիրելու . վասն զի ես անոր վրայ  
աղէկ սկզբունքներ կը տեսնեմ՝ թէ առա  
ուաքինութեանց և թէ ճշմարիտ քրիստո  
նէի : Ինքը աղքատ է , բայց հոգւով հա  
րուստ սիրտ մը ունի , որ աշխարհքիս մէջի  
ամէն անցաւոր հարստութիւնները ծախու  
կ'առնէ . աշխարհքիս բարիքներէն զրկուած  
է , բայց ժառանգ է անխախճան և անանց  
բարեաց : Իրեն խօսակցութիւնը միշտ բա  
րի բաներու վրայ է , ուր ընդ հակառակն  
աշխարհատէր և հարուստ կանանց բոլոր  
խօսակցութիւնքը ինքնահաճութիւն են , հը  
պարտութիւն , սուտ պաճուճանք , աւելորդ  
զարդերու և հաճոյից սէր : Վերոնիքան  
այնպիսի առաքինի կ'ին մըն է՝ որ ինծի



շատ բանի մէջ բարի օրինակ կրնայ ըլլալ .  
անոր համար մնաստակար բան մըն ալ չեմ  
տեսներ որ արգիլէ զիս ստէս իրեն երթա-  
լէս :

Աս իրաւացի խօսքերուլն արդարացաւ  
Վալտէնեան խաթունը , ու շարախօսաց  
բերանը գոցելով՝ իր բռնած ճամբան առաջ  
տարաւ . ամէն կիրակի անկրէստ այցելու-  
թիւն կ'ընէր Վերոնիքային՝ եկեղեցի եր-  
թալու ատեն , և երբեմն շաբթու մէջ ալ  
կ'ելար կր ստորտէր անոր խրճիթին քովե-  
րը : Իսկ Քրիստինէն շատ անգամ ամբո-  
յը կ'երթար , ու միշտ ուրախութեամբ  
կը գառնար . նոյնպէս ալ մայրը ձմե-  
ռուան մէջ գրեթէ ամէն իրիկուն հոն  
կ'երթար բանելու , և ձեռք ձգած ստա-  
կուլն տան համար հարկաւոր եղած բա-  
ները կը գնէր :

Արբոր զուարթարար գարունը հասաւ ,  
Վալտէնեան խաթունը ու Վերոնիքան  
շատ անգամ մէկտեղ ամբոյին քով եղած  
անտառը ժուռ գալու կ'երթային . իրենց  
զակրներն ալ շատ կը զուարճանային ծա-  
ղիկ ժողովելով ու ոչխարին հետ խաղա-  
լով , որ այն ատեն բաւական մեծցեր էր :

Մէկ տօնի օր մին ալ խաթունը թէպէտ  
քիչ մը տկարութիւն կ'իմանար, բայց կան  
չել տուաւ կէս օրուան մօտիկ՝ Վ հրոնիքան  
ու Քրիստինէն, և անոնց հետ գնաց դէպ  
ի անտառը . Վ արդուհին ոչխարն ալ մէկ  
տեղ առաւ, և այսպէս գնացին ինչուան  
կաղնի ծառի մը տակ, և հոն խաթունը  
նստաւ կանանչ գետնին վրայ, ու սկսաւ  
Վ հրոնիքային հետ խօսիլ . իսկ Վ արդու  
հին ու Քրիստինէն ալ առաջ գնացին ին  
չուան անտառին մէջ, ոչխարն ալ իրենց  
ետեւն, ու սկսան ելակ ժողլել : Մէջէր  
նին խօսք գրին թէ տեսնանք ով աւելի ա  
ղէկը կը ժողլէ ու աւելի շուտ կը լեցնէ  
իր կողովը, իրենց մօրը տանելու համար .  
ոչխարն ալ քովերնին կ'արածէր :

Վ արդուհին թուփի մը տակ գեղեցիկ  
տունկ մը գտնելով՝ որուն վրայ լեցուն էր  
եղակով, սկսաւ անկէ լեցնել իր կողովը .  
բայց ժողլելու ատեն տեսաւ սխառանի մը  
որ ան գաւառի մարդիկներուն չէր նմա  
ներ, ու քարի մը վրայ նստած հեռուէն  
ամրոյր և նոյն անտառին գեղեցիկ տեսա  
րանը թղթի վրայ կը նկարէր : Աչխարը ա  
րածելով կամաց կամաց գնաց օտարական

սրատանուոյն մօտեցաւ , ան ալ կենդանին շոյել սկսաւ ու մտադրութեամբ անոր վրայ նոյնին վրայ կը նայէր . վախցաւ Վարդուհին որ չըլլայ թէ բան մը պատահի ոչխարին , դրաւ իր կողովը գետինը , ու վազեց սրատանուոյն քովէն ոչխարը մէկ դի տանելու : Օտարականը Վարդուհին միտքը իմանալով ոտքի վրայ ելաւ , ու գլուխը բաց քաղցրութեամբ ըսաւ իրեն . կարծեմ թէ դքեզ տարակուսի մէջ ձգեցի , բայց գիտնաս որ ոչխարին ընելիք մը չունէի , այլ միայն իրեն վզնոցը աղէկ մը պիտի դիտէի . ոչխարը ինչպէս որ կ'երևնայ քու կինդ է , և անշուշտ վզնոցին վրայի ոսկեթելով բանուած՝ աս երկու Վ . Վ . գլուխագիրները քու անուանոյ սկզբնատառերը պիտի ըլլան :

Հրամմեր ես , Պարոն , ըսաւ Վարդուհին . անոնք իմ անուանս սկզբնատառերն են՝ և կը նշանակեն Վարդուհի Վալբէնէան : — Ի՞նչ զարմանալի բան , կրրկնեց օտար սրատանին , ես ալ մատնի մը ունիմ , և վրան նոյն տառերը փորուած են 1786 թուականով . ահա ասիկ՝ նայէ՛ ըսաւ , ու հանեց մատնին ցրցուց Վար-

դուճիին , որ տեսնալով մասնին շատ ապ-  
շեցաւ աս զարմանալի դիպուածին վրայ :

Քրիտականէն նայեցաւ որ Վարդուհին  
կ'ուշանայ օտար սլատանիին քովը , ինքն  
ալ դէպ ի հոն գնայ ու սկսաւ մասնին  
զննել . ան ատեն օտար սլատանին հեղու-  
թեամբ մը հարցուց իրենց՝ թէ խնդրեմ'  
ըսէք ինձի , ի՞նչ է ասոր սլատաճառը՝ որ  
իբ մատանուոյն վրան ալ նոյն տառերը փո-  
րուած է : Պատասխան տուաւ Վարդու-  
հին . եկե՛ս իմ ետեւէս , ես զքեզ իմ մօրս  
կը տանիմ , անտարակոյս ինքը քեզի ստոյգ  
տեղեկութիւն մը կու տայ : Պատանին  
ծալելց իր թուղթը՝ որուն վրայ կը գծա-  
դրէր , առաւ գրիչը և ուրիշ ունեցած բա-  
ները , և սկսաւ իրենց ետեւէն երթալ . ա-  
տոնց հետ կ'երթար նաև ոչխարը : Կարձ-  
ճամբով մը անտառին մէջէն ելան Վալ-  
տէնեան խաթուենին ու Վերոնիքային դի-  
մայր , որոնք որ կանանչ խոտի վրայ նըս-  
տած էին . խաթուենը իր աղջկանը ձայնը  
ընելով գլուխը գարձուց՝ տեսաւ որ օտար  
սլատանի մը Վարդուհին ետեւէն կու գար ,  
ըսաւ Վերոնիքային . — Արդեօք սո՛վ է աս  
սլատանին՝ որ Վարդուհիս հետը կը բե-

ութ, չըլլայ թէ դժբախտութիւն մը հան-  
տխարած ըլլայ խեղճ սրատանուոյն : Այս  
դուհին վաղեց իր մօրը քով ու ցրցուց իրեն  
մատնին և պատմեց թէ ինչպէս իր ձեռ-  
քը անցաւ . օտար պատանին ալ խաթու-  
նէն քիչ մը հեռու կեցած՝ ու գլխարկը  
ձեռքը կ'սպասէր թէ ո՞ր պիտի վերջա-  
նայ բանը :

Խաթունը աղէկ մը քննելով մատնին  
մէկէն սկսաւ հեկեկալով կանչել . Տէր  
Մատուած, աս մատնին իմ մեռած ընկե-  
րոջս է . ահա իմ կարգուելու օրս ինձի  
տուած մատնին ալ ասօր շատ կը նմանի :  
Բսէ ինձի տղաս, ինչպէս քու ձեռքդ ըն-  
կաւ ասիկայ . դու ո՞վ ես, ո՞ր ծներ ես, ու  
ծնողացդ անունը ինչ է :

Խաթուն, ըսաւ օտար պատանին,  
ծնողքս աղէկ մը չեմ ճանչնար . իմ հայրս  
ղինուորական մարդ է եղեր, որ պատե-  
րազմի մը մէջ մեռեր է . միայն այսչափ մը  
գիտեմ, որ իմ մայրս շատ լաց ու ողբ ըրեր  
է իմ հօրս վրայ : Այլ մենք այսինքն մայրս,  
պղտի քոյրս ու ես թշնամուոյն գիմացէն  
փախչելով՝ հարկադրեցանք նաւակով մը  
Քին գետը անցնել . ես նաւակին մէջ մտ-

ներու ատեն գետին մէջ ընկեր եմ, և ուրիշները զիս խաղըսուցեր են . անկէ ետքը ալ չկրցայ գտնել ոչ մայրս , և ոչ քոյրս : Ան ատենը ես հազիւ թէ չորս տարեկան կայի . ինծի սղտի արկղ մը տուին՝ որուն մէջ աս մատնիէն զատ քանի մը ուրիշ բաներ ալ կային . անկէ ետքը ամենեւին տեղեկութիւն մը չեմ՝ առած իմ ճնողացս վրայ . իսկ իմ անունս Վարդոս կ'ըսուի :

Ո՛վ որդեակս , ըսաւ Վալտէնեան խաթունը , ու վազեց գրկեց օտար սեպուած պատանին . ո՛վ Վարդոս , դու իմ զաւակս ես . երանի՛ ինծի որ կրցայ մէյմ՝ ալ զքեզ տեսնել . դու իմ զաւակս ես , անուշ ձայնդ ու կերպարանքդ ալ քու խեղճ հայրդ միտքս կը բերեն : Տէ՛ր Աստուած , այս ի՞նչ մեծ մխիթարութիւն էր որ շնորհեցիր ինծի . . . :

Արտաշարժ տեսարան մը բացուեցաւ հոն . Վալտէնեան խաթունը ուրախութենէն սկսաւ լալ , բոլոր աշխարհքս իրենը կը սեպէր , ու երանի՛ կու տար իր աչքերուն՝ որ արժանի եղան Վարդօսը տեսնել , զոր մեռած կարծելով այնչափ արցունք թափեր էին : Այցնալէս և Վար-



դուճին իր հարազատ եղբայրը տեսնելով՝  
սաստիկ ուրախութենէն կու լար, կը դողար  
ու Քրիստոսին կը լծընած կ'ըսէր մօրը .  
նվ մայր իմ, մայրս . ո՛վ Աստուած իմ . . . :  
Աարոյտին սիրտն ալ այնպէս լեցուեցաւ՝  
որ ալ ընելիքը չէր գիտեր, և ոչ երկու բառ  
քովէ քով կըցաւ դնել ու խօսք մը զրու  
ցել . վերջապէս մայրը դարձաւ ու ըսաւ  
աղջկանը, — Ա արդուճի, տես Աարոյտ  
եղբայրդ . դու ալ սիրելի որդիս, ճանչցիր  
քու քոյրդ : Մի սիրելի զաւկրներս, գրկեցէք  
մէկզմէկ ըսաւ մայրը, ու մէյմը մէկին՝ մէյ-  
մըն ալ մէկալին թե ին վրայ ինկաւ . տղաքն  
ալ ուրիշ բան չկրցան զրուցել, բայց եթէ  
միայն աս բառերը . իմ սիրելի՛ եղբայրս,  
իմ սիրելի՛ քոյրս : Իսկ Ա երոնիքան ու  
Քրիստոսին աս անակնունելի գիպուածին  
վրայ զարմացած ուրախակից եղան Աարոյ-  
տին մօրը ու քոջը . աս ուրախութեան  
ձայներովը՝ գրեթէ բոլոր անտառը լեցուե-  
ցաւ, ինչուան որ անը կամաց կամաց  
սկսաւ մանալ ու անտառը մը լծըննալ . ան  
ասան խաթունն ալ տղոյմովը դարձաւ  
ամբողջ, իրենց հետ գնացին նաև Ա երո-  
նիքան ու Քրիստոսին, և ոչխարն ալ

ասանց ետեէն կ'երթար : Տուն հասնելուն  
պէս , խաթունը վաղեց իր անկողնին քով  
կախուած փղոսկրէ շինած խաչելութեան  
արձանին ոտքը ինկաւ , շնորհակալ եղաւ  
Աստուծոյ ըրած բարեացը և ողորմու-  
թեանցը համար , որ իր սիրելի զաւակը  
ողջ առողջ իր ձեռքը հասցուց . արցունքը  
աղբիւրի պէս կը վազէր աչքէն , չէր զխտեր  
թէ ինչպէս փառք տայ Աստուծոյ :

Քիչ ժամանակուան մէջ բոլոր ամբոցը  
տարածուեցաւ այս աւետեաց լուրը , թէ  
Վալտէնեան խաթունին զաւակը դտուեր  
է , որ ինչուան ան ատենը մեռած կը կար-  
ծուէր . ամբոցին մարդիկը եկան ուրախա-  
կից ըլլալու երջանիկ մօրը , ու տեսնելու  
անոր Վարդուս տղան :



ԳԼՈՒԽ Զ

Կարողութի պատուոքիւնը՝ ջրէն  
ազատելէն ետև .

ԱՄՐՈՂՈՍ իմանալով իր մօրմէն ամէն  
բան առաքինի Վ Երոնիքային ու անոր աղ-  
ջկանը Քրիստինէին վրայ , շատ ուրախա-  
յաւ . մանաւանդ երբ լսեց որ ոչխարը՝ թէ  
իրենց մեծ ու անպատմելի երջանկութեանը  
պատճառ եղաւ , Վ Երոնիքային ու Քրիստի-  
նէին պարզէն է : Անոր համար ըսաւ Աա-  
րողոս իր մօրը որ ան իրիկուան սեղանին ու  
ուրախութեան անոնք ալ մանաակից ըլլան ,  
և իրենց ունեցած սրտանց բարեկամու-  
թիւնը ասիէ ետքն ալ շարունակուի . որով  
հետև անոնք եղան գործիք մը , որով Աս-  
տուծոյ նախախնամութիւնը զիս քու ձեռքդ  
հասցուց : Աս ինչուան հիմնց մէկ աղ-  
բաս որք մըն էի՝ երեսի վրայ մնացած ու  
անձանօթ , իսկ հիմնց հրամանուցը որդին  
ու հօրս յաջորդը . ինչուան այս օրս մարդ

մին ալ չէր ճանչնար զիս , բայց ասկէ ետե-  
կարծեմ թէ բոլոր դաւառին մարդոց ծա-  
նօթ պիտի ըլլամ : — Հատ լաւ մտածեր  
ես , պատասխանեց մայրը , աղէկ կ'ըլլայ որ  
Վերոնիքան ու Քրիստինէն ալ մեզի հետ  
սեղանի նստին , ասով քու երախտագի-  
տութիւնդ ալ կը յայտնուի . քու աս  
մտածութիւններդ , որդեակ լսմ , յայտնի  
կը ցուցնեն թէ հօրդ արժանաւոր որդին  
ես . վասն զի ինքն ալ շատ կը սիրէր ար-  
դիւնաւոր մարդիկներուն՝ արժանի պատիւը  
տալ :

Մէնքը մէկտեղ սեղանի նստան , Աա-  
րոյոսը իր մօրը ու քրոջը մէջ տեղը նստեր  
էր , Վերոնիքան ու Քրիստինէն անոնց  
դիմացը . կերակուր ուտելու ժամանակ  
անդադար աս անակնկալ դիպուածին  
վրայ կը խօսէին Վարտէնեան խաթունն ու  
Վերոնիքան , և թէ ինչպէս խաթունին  
վիճակը փոխուեցաւ ու իր առջի փառաւո-  
րութեանը հասաւ . Վարդուհին և Քրիս-  
տինէն ալ իրենց մօրը խօսածներուն մօտիկ  
կը դնէին զարմանալով մը . Աարոյոսի  
ուրախութիւնն ալ անպատում էր իր սի-  
րական մայրը գտնելուն համար : Ատքը

երբոր սեղանէն ելան , մայրը հարցուց Աարոյտին թէ ինչ բան որ գլխէն անցեր է կարգաւ տեղն ի տեղը պատմէ , որպէս զի սրտերնին հանգչի :

Ան ատեն սկսաւ Աարոյտ իր պատմութիւնը ընելու . — Ինչպէս որ առաջ զրուցեցի ըսաւ , մեր նաւակը երբ ջրին մէջ դարձաւ , զիս ուրիշները ազատեցին խորդութիւնէն . ետքը որովհետեւ մարդ մը չէի ճանչնար , տարին զիս Քին գետին քով եղած գաւառին ժողովրդապետին՝ որուն անունն էր Գաբրիէլ . սիրով ընդունեցաւ զիս ու հարցուց ծնողացս վրայօքք , ես ալ ինչ որ գիտէի պատմեցի իրեն : Մեծարգոյ ժողովրդապետը լսելով ինձմէ մեր գլխուն եկածը , շատ մարդու հարցուց որ թերեւս զիս ճանչնան , բայց շրջակայ գաւառներուն տուած տեղեկութիւններէն՝ բան մըն ալ չկրցաւ խմանալ թէ ես որուն որդին եմ . անոր համար ժողովրդապետը զիս իր քովը պահեց : Արբոր քիչ մը մեծցայ ու խելքս բացուեցաւ , սորվեցուց ինձ ի կարգալ , գրեղ , լատիներէն լեզուին սկըզբունքը , աշխարհագրութիւն և բնաբանութիւն . ա՛հ ինչպէս երբեմն ան պատուա-

կան ժողովրդապետը՝ զիս դիմացը կանչե-  
լով կը խօսէր Աստուծոյ ու ճշմարիտ  
հաւատքին վրայ . կրնամ ըսել թէ ինքն  
էր կատարեալ Քրիստոսի աշակերտը ,  
և աս ճշմարիտ հաւատքը աւելի իր բա-  
րի օրինակովը կը սորվեցնէր քան թէ խօս-  
քով :

Օր մը ըսաւ ինծի այնպէս անուշ ձայ-  
նով մը , որ ինչուան իմ սիրտս թափան-  
ցեց , թէ Աւրոյտս՝ բանի չիզար բերնով  
միայն ըսելը թէ պէտք է զԱստուած սի-  
րել , հապա աս սէրը պէտք է ցուցնել  
եղբայսիրութեամբ ու առաքինական գործ-  
քերով : Միայն հաւատքը մեզի կրնայ  
սորվեցնել թէ ինչպէս պէտք է զԱս-  
տուած սիրել , ու իրեն ծառայել . վայ-  
ան մարդիկներուն՝ որ անսիրտ կ'ըլլան ի-  
րենց պարտքերը կատարելու : Այսպիսի  
մարդկանց կեանքը չորցած թուփի կը նմա-  
նի , որ այրելէն զատ բանի մը չի գար .  
վասն զի այսպիսի մարդիկ վախճանակ բա-  
րի բաներ ընելու , իրենց ժամանակը ու-  
նայնութեամբ կ'անցընեն , և մէկ օր մը ան-  
յաւիտեանականութիւնը՝ որուն վրայ ամե-  
նէին չին ուզեր մտածել , յանկարծ պիտի



կրէ զիրենք : Այն ան ատեն պիտի ճանչ-  
նան թէ իրենք աս անցաւոր աշխարհքիս  
համար չէին ստեղծուած , բայց ուշ . և  
ունայնաձեռն պիտի ելեն իրենց դատաւո-  
րին առջևը , աշխարհքս պիտի փախչի ի-  
րենցմէ , ու Աստուած իրենց ամենեկին  
վարձք մը պիտի չիտայ , որովհետև Աս-  
տուծոյ չին ծառայած :

Ատքը դուրգուրալով մը հարցուց ինձի  
թէ կը խոստանան որ բոլոր կենացդ մէջ  
լաւ քրիստոնէի մը սէս ապրիս , որով և  
կարենաս արժանի ըլլալ երկնային մշտն-  
ջենաւոր երանութեան վայելիցը : Աս ալ  
սիրով խոստացայ իրեն , ու կը ջանայի ը-  
սածները պահելու . մասնաւոր փոյթ ունե-  
ցայ իմ ամէն պարտաւորութիւններս աղէկ  
կատարելու . առտու իրիկուն անվրէպ ա-  
ղօթքս կ'ընէի , մեծերուս իրենց աստիճա-  
նին համեմատ պատիւը կու տայի : Ասոնք  
տեսնելով մեծարգոյ ժողովրդապետը , ալ  
աւելի սիրով կ'աշխատէր վրաս , զիս աղէկ  
դաստիարակելու . ուստի իրեն քով կարդա-  
ցի հին ու նոր մատենագրաց ընտիրներէն  
շատը , ու մէկ լեզուէն ուրիշ լեզու կը թարգ-  
մանէի ինչ որ կը կարդայի . ասով շատ կ'ու-

բախանար իմ յառաջադիմութեանս վրայ ,  
ու ինչպէս իր հոգեզաւակը կը սիրէր զիս .  
սորմեցուց ինձի նաև քիչ մը պարտիզպա-  
նութիւն , ծառերը պատուաստելու կեր-  
պը , ծաղիկներ հոգալը . որոնցմով հան-  
գրտտեան ժամանակը շատ կը զուարճա-  
նայի , և երբեմն իրեն ալ կ'օգնէի . որով-  
հետև ինքն ալ շատ կը սիրէր պարտիզին  
մէջ աշխատիլ : Ասոնցմէ զատ իմ բարերարս  
ուրիշ բան մըն ալ մտածեց , որ մեծնալէս  
ետև անով կարենամ ստակ վաստրկիլ . ո-  
րովհետև ինքը աղէկ պատկերահան էր ,  
սկսաւ ինձի պատկերահանութիւն ալ դաս  
տալ . աս արհեստը ինձի շատ ակործելի  
եկած էր , վասն զի յարգը կը ճանչնայի ,  
անոր համար մեծ ջանքով ասոր ալ ետևէն  
ինկայ . ու մէկ երկու տարուան մէջ շատ  
առաջ գացի : Ինքն ալ տեսնելով յաջո-  
ղակութիւնս , ուրախութեամբ լեցուեցաւ ,  
ու քաշած պատկերներէս մէկ քանին Վեր-  
մանիա իր բարեկամին խաւրեց՝ աղաչելով  
որ ինձի տէր կենայ համալսարանի մը մէջ  
մտնելու , որով կարենամ աւելի լաւ կա-  
տարեկագործել ուսմունքս : Բանի մը օրէն  
ետև ժողովրդապետը իր թղթին պատաս-

խանը առնելով, խմացաւ որ իր բարեկամը սիրով յանձնէ կ'առնէ զիս քովը պահել, և անձամբ առաջնորդել ինծի ամէն բանի մէջ . բաւական է որ ես միայն փոյթ ունենամ իմ ուսմանս : Աւստի ժողովրդապետը յանձնեց զիս Գերմանիա գնացող վաճառականի մը՝ որ մեծ սիրով յանձն առաւ իր կառքին մէջ առնելու զիս ալ . շուտով մը ճամբու ամէն բան պատրաստելէն ետե իմ բարերար գաստիարակս իբրև ետքի խրատ զասոնք ինծի ըսաւ թէ՛ . քեզի ինչ բարի սկզբունք որ տուի , նայէ որ անոնց վրայ հաստատուն կենաս , գէշ ընկերներէ փախչիս . ապսպրեց նաև որ ստէպ ստէպ աղէկ գրքեր կարդամ ու իմ վրաս արթուն ըլլամ , ետ կենամ անպիտան ախտերէ որ իմ հասակիս նախատինք կ'ընեն : Ա՛ երջը օրհնեց զիս , երկու ոսկի ալ ձեռքս գրաւ , և ետքի երթաս բարովն ըսելու ժամանակ սկսաւ լալ . իմ ալ սիրտս շատ տակնու վրայ եղաւ այնպիսի բարերարի մը քովէն բաժնուելու համար , յետոյ պապտուհցանք իրարու հետ , ու ես ճամբայ ելայ :

Կարողոս աս պատմութիւնը իր մօրը

պատմելու ժամանակն ալ սկսաւ ըսլ, նոյն  
 պէս և մայրը, քոյրը, Վերոնիքան ու  
 Քրիստինէն ալ. քիչ ատենէն նորէն սիրտ  
 առաւ. Կարողոս ու սկսաւ առաջ տանել  
 իր պատմութիւնը թէ՛ չեմ կրնար զանց  
 առնել պատմելու վաճառականին հետ ը-  
 րած ճանքորդութիւնս. վասն զի վաճա-  
 ռականը ամէն կերպով կը նայէր որ զիս  
 մխիթարէ, ու ինչպէս մէկ հայր մը այն-  
 պէս իմ ամէն բանս կը հողար՝ ինչուան  
 որ երէկ իրիկուն հասանք մէկ գեղի իջևան  
 մը, որ քիչ մը հեռու է ասկէ՛ և հոն հար-  
 կադրեցանք մէկ մէկէ բաժնուելու: Արու-  
 հետև վաճառականը ուրիշ ճամբայ պիտի  
 բռնէր, ես ալ շուղեցի կիրակի օրով ճամ-  
 բայ ընել, և միաքս գրի որ աս օրս հոս  
 գեղը անցրնեմ: Այլայ եկեղեցին գնացի սա-  
 տարագ՝ մը ըսելու համար, և վրաս մեծ  
 տպաւորութիւն ըրին քահանային խրա-  
 տական խօսքերը, որ կ'ըսէր, — Չեր  
 յոյսը Աստուծոյ վրայ գրէք, նայեցէք  
 ազարակի մէջ բուսած շուշանները՝ որ  
 չեն մաներ, սակայն և ոչ Մողման ա-  
 նանկ փառաւոր զգեստ հագաւ իր մեծու-  
 թեանցը մէջ: Տեսէք երկնքին թռչուն-

ները՝ իրենք ամենեւին բան մը չեն ցաներ  
և ոչ պաշար կը ժողվեն իրենց շտեմա-  
րանը, սակայն մեր երկնաւոր հայրը կը  
կերակրէ զիրենք. սրչափ աւելի զձեզ  
կը հոգայ, որ իրեն սիրելի ստեղծուած  
ներն էք :

Աս խօսքերը շատ քաջալերեցին զիս, ու  
մեծ վստահութիւն տուին ինձի. ետքը  
պանդոկին մէջ քիչ մը կերակուր կերայ,  
ու ելայ դէպ ի անտառը երթալու՝ միտքս  
զնելով որ բնութեան քանի մը աղուոր  
տեսարանները նկարեմ: Արբոր աս ամրո-  
ցին տեսքը թղթի վրայ կ'անուէի, ոչխարը  
արածելով կամաց կամաց ինձի մտեցաւ.  
ես ալ իր վնոցը տեսնելով՝ սկսայ ու-  
շադրութեամբ անոր վրայ եղած գրեուն  
նայիլ, և իմ քովս եղած մատնիին վրայ  
փորուած գրերուն հետ բաղդատել՝ որոնք  
իրարու շատ կը նմանէին: Աս միջոցին  
քովս եկաւ, ինչպէս անձանօթ մը, քոյրս  
Վ արդուհին ճերմակ զգեստ հագած: Աւ  
անկէ ետքը եղածները գիտէք: Ի՞նչ մեծ  
բարեբարութիւն էր՝ որ ըրաւ Աստուած  
ամենաբարին, զիս աս կողմերը ձգելով,  
որով նորէն կրցայ գանալ իմ մայրս ու

քորս : Աս խօսքէն ետև դարձեալ իրեքն  
ալ մէկգմէկու զիրկը ինկան ու սկսան  
լալ իրենց սրտին մեծ ուրախութենէն , և  
շատ ոչ բաժնուեցան մէկմէկէ , ու քա-  
շուեցան Հանդչելու :





## ԳԼՈՒԽ Է

Ժողովրդապետին անբոց  
գաղը .

ԼՆՈՒԱԽՕՏԸ կանուխ ելաւ Աարօղոս ,  
ու սկսաւ նամակ մը գրել իր ժողովրդա-  
պետին՝ իմացընելով անոր թէ իրմէ բաժ-  
նուելէն ետե ի՛նչեր հանդիպեցան . և միան-  
գամայն հրաւիրեց զժողովրդապետը՝ որ  
գայ քանի մը օր իցենց հետ մէկտեղ ամբո-  
յը անցընէ : Արբոր աս քանիս համար իր  
մօրը հաճութիւնը ուզեց , խաթունը շատ  
հաւնեցաւ իր որդւոյն մտածմունքին . ան-  
կէ ետքը Աարօղոս մօտի գեղերը քիչ մը քա-  
լելու գնաց և ամէն տեղ շատ մեծ ընդու-  
նելութիւն ու սլատիւ գտաւ՝ որով իմա-  
ցաւ թէ իր մայրն ալ ի՛նչպէս սլատուա-  
ւոր է եղեր բոլոր գաւառին մէջ : Աւթ օ-  
րէն ետե եկաւ հասաւ ժողովրդապետը , և

անույ՛ մեծ ուրախութիւն մը հորէն տիրեց  
բոլոր ամբոյնն մէջ : Կարողսին մայրը  
պատուով ու յարգութեամբ ընդունեց զին-  
քը , և իր որդւոյն կողմանէ անթիւ երախ-  
տագիտութեան խօսքեր ըսաւ ժողովրդա-  
պետին . բայց առաքինութեամբ զարդա-  
բուած ժողովրդապետը մեծ ուրախութիւն  
կ'իմանար ու երջանիկ կը սեպէր ինքզինքը՝  
որ իր հոգեզաւակ ու ձեռասուն աշակեր-  
տը Կարողս գտեր է իրեն մայրը : Տեսէք ,  
կ'ըսէր , Եստուծոյ սքանչելի նախասնա-  
մութիւնը , ինչպէս ամէն բանի մէջ բա-  
րի վախճան մը կը գիտէ : Իրաւ որ շիայ  
այնպիսի ուրախութիւն մը որ ձեր ու-  
նեցածին հաւասարի . մայր մը իր կոր-  
սուած որդին գտնէ , և կորսուած որ-  
դին ալ իր մայրը : Սիրելի խաթուն ,  
ան օրն որ Կարողսը գտաւ զքեզ , իմ  
բոլոր կենացս մէջ ունեցած գլխաւոր եր-  
ջանիկ օրերէն մէկը կը սեպեմ . և կը յու-  
սամ որ տղադ ինչ սկզբունքներ ինձմէ ա-  
ռաւ , բոլորն ալ միշտ ի բարին պիտի  
գործածէ որով իմ երեսս ալ ձերմակ պի-  
տի կըլէ ամենարդար դատաւորին դիմաց :  
Ես խօսակցութիւններէն ետքը կերակուրի

ժամանակը գալով՝ ամէնքը մէկտեղ ուրախ  
զուարթ գնացին սեղանի նստելու . ետքը  
պատէզ իջան և նստան շուքի մը տակ , ու  
խօսակցութիւննին առաջ տարին . դարձաւ  
խաթունը ըսաւ ժողովրդապետին թէ ,  
— Ար փափաքիմ որ երախտագիտութեամբ  
բարիք մը ընեմ անոնց , որ իմ որդւոյս  
վրայ հոգ ունեցեր են զինքը պահելու . և  
գիտեմ , մեծարգոյ Տէր , որ աշխարհքիս  
մէջ չկայ այնպիսի բան մը որ հրամա-  
նոցդ ըրածին փոխարէն մը ըլլայ . բայց  
կը յուսամ որ հրամանքդ ասոր հատու-  
ցումը երկինքը պիտի վայելն . միայն  
կը խնդրեմ ըսէ ինձի թէ որ գիտես ,  
գետին մէջէն ո՞վ խալըսցուցեր է իմ որ-  
դիս :

— Վատասխանեց ժողովրդապետը թէ՛  
մէկ զինուոր մը՝ որ դեռ կ'ապրի , ու թէ  
որ ուզենաք հիմայ կրնաք տեսնել զինքը .  
աս բարի մարդը շատ դժբախտութիւններ  
քաշեց Արտուսը ջրէն աղատեղէն ետև .  
վասն զի նոյն գիպուածէն քիչ մը ետքը՝  
պատերազմի մը մէջ չարաչար վիրաւորուե-  
ցաւ , ու խեղճը և ոչ ժամանակ ունեցաւ  
վերքը հոգալ տալու . որովհետև իրենց

բանակը թշնամոյն դիմաց ինկած կը փախչէր, և հազիւ զինքը կառքի մը վրայ դրին՝ ուր որ ուրիշ շատ վերաւորներ ալ կային, և անոնցմով մէկ տեղ հասան սլզտի գեղ մը: Վեղին բնակիչները դժալով ասոնց վրայ, գնացին վերաւորները տեսնելու. աս մարդոց մէջէն բարեպաշտ ներկագործ մը ճանչցաւ աս զինուորը, որովհետեւ քիչ մը ժամանակ քովը ծառայեր էր, ու դժալով խեղճին վրայ խնդրեց հարիւրապետէն որ ան զինուորը իր քովը մնայ, բայց հարիւրապետը չթողուց: Ներկագործն ալ շուտ մը գնաց գեղին բժիշկը կանչեց. ան ալ քննեց վերքը, և ըսաւ որ եթէ ճամբայ ընելու ըլլայ, անտարակոյս մէկ քանի ժամէն կը մեռնի. հարիւրապետը նայեցաւ որ չըլլար, հրաման տուաւ որ հոն մնայ: Բարեպաշտ ներկագործին խնամքովը քիչ ատենէն զինուորը առողջացաւ, և սիրով յարուեցաւ ներկագործին հետ՝ իրեն ըրած մեծ բարեգործութեանը համար. ու անկէ ետքը սկսաւ նորէն անոր գործատանը մէջ աշխատիլ: Շատ տարի երջանկութեամբ հանգիստ ապրեցաւ իր բարեկամին քով՝ կարծելով որ աս բարութիւն

նը երկայն ատեն սխտի տուէ . մէյ մին ալ  
մահը յանկարծ յափշտակեց ներկագործը :  
Դառանդները առանց նայելու իրեն ար-  
դիւնաւոր ծառայութեանը՝ վնասեցին ի-  
րենց քովէն . խեղճ ծերը ուրիշ ճար մը չու-  
նենալով որ կարենայ ապրելու քովս եկաւ ,  
երբոր ես օր մը առաջ ճամբեր էի Աարո-  
լոսը . և պատմեց ինձի իր ցաւալի վիճակը ,  
ու խնդրեց որ իրեն համար տեղ մը գրա-  
նեմ : Ետ նայեցայ ասդին անդին ու  
գեռ յարմար տեղ մը չգտնալով քովս ա-  
ռի , որ իրեն պարկեշտութեամբ ու բարի  
վարքով ինձի մեծ բարի օրինակ եղաւ .  
և հիմայ հոս գալու ժամանակս աղա-  
չեց որ ինքը ըլլայ կառքը քշողը , ես  
ալ զինքը բերի , թէ որ կ'ուզէք կանչեմ  
զինքը :

Պատասխան տուաւ խաթունը թէ  
հրամմեր ես կ'ուզեմ , զայ որ ես ալ կեր-  
պով մը փոխարէն ընեմ իրեն՝ որդւոյս  
կեանքը խաղըսելուն համար : Դողովողա-  
պետը ելաւ նստած տեղէն , ու սկսաւ կան-  
չել անունովը թէ՛ Ա ետս եկուք խաթունը  
կ'ուզէ զքեզ տեսնալ : Ա ետս շուտ մը ե-  
կաւ , և մեծ պատուով ընդունեցաւ զինքը

խաթունը ու որդւոյն համար շատ շնորհա  
կալ բըլայէն ետև խոստացաւ աղէկ վարձք  
մը տալու . հարցուց իրեն որ կ'ուզէ ամբո  
ցին մէջ ծառայել . ինքն ալ մեծ յօժարու  
թիւն ցրցուց : Նորէն խաթունը ըսաւ , —  
Քու անունդ ինձի անձանօթ անուն չերև  
նար , և ինչպէս որ կը յիշեմ , անդամ մը  
Վ երոնիքան ըսաւ ինձի թէ իրեն ընկերոջը  
անունը Վ ետա է : Վաթուն ինչ կը զրու  
ցէք , ըսաւ Վ ետը , Վ երոնիքա անունով  
ես ալ կին մը ունէի : Արեմն կարգուած  
ես դու . հարցուց խաթունը : — Հրամմեր  
էք խաթուն , կարգուած էի , ըսաւ Վ ետ  
ու մէկ դուստր մըն ալ ունէի որուն ա  
նունը Քրիստինէ էր : Հարցուց նորէն  
խաթունը . զինուոր չեղած դու որսա  
պետ եղեր ես : — Հրամմեր էք խաթուն  
ըսաւ Վ ետ . բայց խնդրեմ չզարմանաք  
յանդգնութեանս վրայ , այս ամէն բա  
նը ինչէն գիտէք հրամանքնիդ : Վ ալ  
տէնեան խաթունը առանց պատասխան  
տալու , կանչեց Քրիստինէն որ քիչ մը  
հեռուն կ'աշխատէր . ըսաւ իրեն թէ վա  
զէ շուտ մը ձեր տունը , ու ըսէ մօրդ  
որ հոս գայ . դուն ալ իրեն հետ մէկ



տեղ գաս , շուտ ըրէ ատեն մի կորսըն ,  
յնևր :

Քրիստոնէն վազելով գնաց մայրը կան ,  
չելու , և Վ ալտէնեան խաթունը սկարտէ ,  
զին մէջ սկսաւ դարձեալ իր խօսակցու  
թիւնը առաջ տանիլ ժողովրդապետին հետ .  
խակ Վ եստ ուզեց մէկ զի երթալ , որպէս զի  
ժանրութիւն չըլլայ իրենց . բայց Վ ալտէ  
նեան խաթունը չթողուց , ու ըսաւ որ ի  
րենց մօտը նստի : Քիչ մը ատեն անցնե  
լէն ետքը եկաւ Քրիստոնէ , հեւքը բերանը  
հասած , և ըսաւ թէ հիմայ շուտով մայրն  
ալ կը հասնի . Վ եստ խորունկ մտածմունք  
ներու մէջ ընկղմած կը նայէր Քրիստո  
նէին վրայ ու մտքէն կ'անցընէր թէ ար  
դեօք ինչ եղան իրեն ընկերը , ու մէկ հա  
տիկ դուտարը որ Քրիստոնէ կ'ըսուէր .  
մէյ մըն ալ հուռէն տեանուեցաւ խա  
թունին կանչել տուած Վ երոնիքա ա  
նունով կնիկ մարդը որ իր ընկերը Վ երո  
նիքան է եղեր :

— Վ եստ կը ճանչնամ աս կնիկ մարդը  
որ կը մօտենայ մեզի , հարցուց Վ ալտէ  
նեան խաթունը : Մարդը աչքը դարձուց  
կնիկ մարդուն վրայ , աղէկ մը նայեցաւ ու

սկսաւ կանչել . — Տէր Աստուած , ասիկայ իմ ընկերս Վ Երոնիքան է . ու վաղեց սլուեցաւ անոր : Վ Երոնիքան ալ ճանչնալով իրեն ամուսինը՝ սիրտը ելաւ ու երկուքն ալ սկսան լալ . իսկ Քրիստինէ ապշած կը նայէր մէյ մը մօրը , ու մէյ մըն ալ իր անձանօթ հօրը վրայ : Ան ատեն խաթունը Քրիստինէին ձեռքէն բռնած Վ Եստին առջևը տարաւ , — Արանի՛ քեզի , ըսաւ , որ ասանկ աղնիւ և առաքինութեամբ զարգարուած աղջիկ մը ունեցիր ես : Վ Եստ մէկէն գրկեց ու պագաւ զինքը , Քրիստինէին ալ աչուրները լեցուեցան , և սկսաւ լալ :

Արկար ատեն իրեքը մէկ տեղ լալէն ետքը , երբ քիչ մը իրենց սիրտը հանտարտիլ սկսաւ , Վարդուս ու Վարդուհի Քրիստինէին ուրախակից սկսան ըլլալ , ասանկ մեծ բարեբաղդութեան հասնելուն համար . խաթունն ալ Քրիստինէին մօրը ըսաւ . — Ինչպէս ասիկէ առաջ իրարմով կը մխիթարուէինք մեր թշուառութեանցը մէջ , ու հիմայ Աստուծոյ անհուն ողորմութեամբ ես իմ առջի վիճակիս հասայ , և դուն ալ քու սիրելի ընկերդ գտար . ուստի դուք ալ

Հոս ամբողջին մէջ կեցիք , որ դուք ալ հետերնիս վայելէք մեր ունեցածէն որ Աստուծով օրէ օր կ'աւելնայ : Վետ ալ խոստացաւ որ միշտ խաթունին ծառայութեանը մէջ մնայ աւենայն հաւատարմութեամբ աշխատելով :

Մէկէն առ ուրախալի լուրը տարածուեցաւ չորս դին , ու ամէնքը Վերոնիքային աչքի լուսի եկան : Քարեպաշտ ծերունի մը որ Վերոնիքայի վրայ մեծ համարմունք ունէր՝ իրեն առաքինութեանը համար , — Աստուած մեզի կը հրամայէ , ըսաւ , որ լացողին հետը լանք , և խնայողին հետ խնտանք . այսպէս հիմայ մենք ամէնքս ուրախակից ենք քեզի որ Աստուած ողջ առողջ հասցուց քու սիրելի լծակիցդ : Արնէկ քեզի Վերոնիքա՝ որ մեզի բարի օրինակ եղար և շնորհար մէկը վրադ արատ մը դնել . դուն միշտ համեստ , քաղցր և ամէնուն սիրելի եղեր էիր . ուրիշ մը թէ որ քու տեղդ եղած ըլլար՝ այսչափ նեղութիւններ թշուառութիւններ քաշելու ժամանակ՝ անշուշտ կը յուսահատէր : Քայց դու սիրով համբերեցիր ամէն վշտայ՝ և ուրիշներուն բարի օրինակ եղար . Աս-

տուած ալ ըրած առաքինութիւններուդ  
փոխարէնը ահաւասիկ հատոյց . մտրիկէն  
եաքը հանդարդութիւնը եկաւ , արտա-  
սուաց տեղը երջանկութիւնը փոխանա-  
կեց : Վայելէ ուրեմն հիմակուան բա-  
րիքը , որուն որ արժանի ես իրաւամբ .  
այսչափ ժամանակ Մտուած գրեց ուրիշ  
բանի համար չփորձեց , բայց եթէ քաջա-  
լերելու և պսակելու քու համբերութիւնդ՝  
մէկ մեծ ուրասութենով մը , որ ամէն  
գժնգակ նեղութիւնները ու տառապանք-  
ները կը մոռցրնէ :

Հոն եկաւ նաև պատուական ժողովըր-  
դապետը , և կարճ խրատական խօսքերով  
գովեց Վալտէնեան խաթունին և Վերո-  
նիքայի ու անոնց զաւակացը առաքինու-  
թիւնները , և թէ ինչպէս վարձատրեց Մս-  
տուած անոնց բարի սիրտը : Վսողներուն  
ալ մեծ շինութիւն և առաքինութեան ե-  
տեւէ ըլլալու յորդոր մը եղաւ :

Վալտէնեան խաթունը շատ աղքատ  
ներու առատ ողորմութիւն տուաւ՝ իր որ-  
դուոյն Վարդոսին ողջ հասնելուն հա-  
մար . շատ աղքատաց պարտքերը ինքը  
վճարեց , շատերուն ալ ուրիշ կերպով մը

օգնեց . խակ Աարողոսի հասակակից տղոց  
ալ փառաւոր սեղան մը պատրաստեց գե-  
ղին պաշտպան սուրբին տօնախմբութեան  
օրը : Աերակուրի ժամանակ սեղանին վրայ  
ինքը խաթունը ծառայեց , և տեսնելով  
տղոց անմեղ ուրախութիւնը՝ ինքն ալ ա-  
նոնց հետ շատ ուրախացաւ . նոյնպէս  
Աարողոս , Վարդուհին , Վեստ , Վե-  
րոնիքան ու Քրիստինէն հոն էին՝ և ի-  
րենք ալ շատ զուարճացան տղոց ուրա-  
խութեամբը : Աերակրէն ետքը տղաքը  
պարտէզ հանեցին՝ ուր իրենց թուփը  
ճերմակ գառներ բերել տուեր էր խաթու-  
նը , և ամէնուն ալ վիզը գոյնզգոյն ժա-  
պաւենով վզնոց անցուցած՝ և վրան ալ  
թուանշաններ դրած կար . տղաքը դառ-  
նուկներուն շորս դին կլոր շարուեցան , ու  
Աարողոս ամէնուն գլխաւորէն անցաւ կար-  
գաւ՝ ձեռքը տուի մը բռնած , որուն մէջ  
սղտիկ թղթեր կային և վրանին նոյն թիւե-  
րը դրած :

Ուստի տղոց մէջէն ամէնէն սղտիկը  
սկսաւ անկէ թուղթ մը առնել , և վրան  
ինչ թիւ որ դրած կար՝ նոյն թիւը ունեցող  
դառնուկը կ'առնէր իրեն . այսպէս ամէնքն

ալ կարգաւ առին մէյմէկ դառնուկ՝ և  
շատ ուրախացան . ասանկ ինչուան ի-  
րիկուն տղաքը նոյն ամբոցին մէջ անցուցին  
ուրախ զուարթ : Աւ իրիկունը երթալու  
ժամանակնին՝ Վ ալտէնեան խաթունը ք-  
տաւ իրենց , — Սիրելի որդեակք , աս դառ-  
նուկները իմ սիրելի որդւոյս Արուստի ու  
Վ ետ քարեկամիս ողջ առողջ առանց  
փորձանքի տուն դառնալնուն համար տուի  
ձեզի . յուսամ որ դուք շատ հաճեցաք և  
ուրախացաք ասոնց վրայ , անտարակոյս  
ձեր ծնողքն ալ շատ պիտի ուրախանան :  
Աս դառնուկները ամէնքնուս ալ գեղեցիկ  
օրինակ մը կրնան ըլլալ իրենց քաղցր ու  
սիրուն բնութեամբ . վասն զի նախ իրենց  
հեղահոգի կերպը մեզի կը սորվեցնէ թէ  
ինչպէս դժած աչքով պիտի նայինք մեր  
նմաններուն , համբերելով նեղութեանց ու  
նախաստանց առանց տրտնջալու : Արկրորդ  
նոյնպէս իրենց բուրդին ճերմկութիւնը կը  
սորվեցընէ մեզի թէ ինչպէս պէտք է մեր  
հոգին մաքուր պահենք անմեղ և անարատ  
անցնելով կեանքերնիս , ու փախչինք ան-  
բաներէն՝ որ Աստուծոյ հաճոյ չեն , ու  
զմեզ Աստուծոյ շնորհքէն կը զրկեն : Ար-



բորդ ինչպէս որ իրենք ամէն բանի գոհ  
կ'ըլլան ու զիրենք դարմանելը շատ դիւ-  
րին է, պիտի ջանանք մենք ալ մեր փա-  
փաքանայր չափ դնել ու ժուժկալ ըլլալ  
և քիչ բանով շատանալ. ուրեմն սիրելի  
տղաքս քանի որ աս դառնուկները ձեր  
տանը մէջ կը տեսնաք, մտքերնիդ բերէք  
աս ըսածներս ու ջանացէք առաքինու-  
թեան ետեւ ըլլալու :

Ամէնքը մէկ բերան պատասխան տուին  
թէ հրամմեր ես խաթուն, հրամմեր ես՝  
պիտի ջանանք բոլոր ըսածներդ կատարե-  
լու. ետքը շնորհակալ ըլլալով իրենց բա-  
րերարին՝ անոր ձեռքը պագին, ու պար-  
զենին հետերնին տուն դարձան :

Աս բարեգործութիւններով Ապրտե-  
նեան խաթունը գեղի բնակիչներուն սիր-  
տը այնպէս իրեն շահեցաւ, որ ամէնքն  
ալ իրեն մեծ պատիւ կ'ընէին ու կը սի-  
րէին զինքը. Աարողոս ալ երթալով մեծ-  
ցաւ բարի վարքով ու արժանապէս ժա-  
ռանգեց իր հօրը ունեցածները, և ամէն  
բան կարգի կանոնի դրաւ, ու իր եկա-  
մուտին մէկ մասն ալ որոշեց որ ամէն  
տարի աղքատայ տայ : Գեղին դպրա-

տունը նորոգել տուաւ , վարպետը փոխեց  
ուրիշ հմուտ մարդ մը դրաւ . դպրատան  
մէջ գրքատուն մը շինեց , ու աղքատ տը-  
ղոց համար ալ գրքեր գնեց , աշխարհա-  
ցոյցներու տախատկներ առաւ . վերջապէս  
ամէն կերպով զարդարեց դպրատունը , և  
որպէս զի տղաքը աւելի քաջալերուին ու  
օրէ օր մեծ յառաջագիմութիւն ունենան՝  
ստէպ ստէպ ինքն ալ այցելութեան կ'ել-  
լեր , և տղոց ալ մէյմէկ պարգևներ կու  
տար : Ասանկով գրեթէ բոլոր գեղացւոց  
երջանկութեանը սխառճառ եղաւ , որով-  
հետև տղաքը ուսմունք սորվելով խիստ ա-  
ղէկ ու շահաւետ վիճակ ունեցան . ասկէ  
զատ Կարողոս հիւանդներու , անտէր աղ-  
քատաց ու խեղճ ճանտպարհորդաց հա-  
մար հիւրանոց շինել տուաւ . ու մեծ անուն  
հանեց ան կողմերը իրեն աս մեծամեծ բա-  
րեգործութիւններով :

Մայրն ալ տեսնելով իր որդւոյն գութը  
ու սէրը՝ որ ունի աղքատներուն վրայ , չէ-  
թէ միայն կ'ուրախանար , այլ աւելի ալ կը  
յորդօրէր զինքը որ միշտ նայի ձեռքէ չի  
թողու բարեգործութիւնները . վասն զի  
կ'ըսէր թէ Աստուած ամենատեսն և ար-

դարադատ՝ ըրածիդ փոխարէնը մեզի հա-  
րիւրապատիկ հատոյց ու կը հատուցանէ :  
Եւ իրաւցընէ աս բարեպաշտ ու ողորմած  
ընտանիքը օր է օր չէ թէ միայն աս աշ-  
խարհքիս վրայ երջանիկ եղան , հասպա թէ  
հասե անշուշտ անդիի աշխարհքն ալ կ'ու-  
րախանան Աստուծոյ յաւիտենական և ա-  
հանց փառօրք :





# Յ Ա Ն Կ Կ Լ Խ Ո Յ



Գ Լ . Ա .	Քրիստինէն ու իր Ալերոն- նիքա մայրը . . . . .	5
Գ Լ . Բ .	Արդուհի վալտէնեան . . . . .	24
Գ Լ . Գ .	Վալտէնեան խաթունը հի- ւանդտեսի կ'երթայ . . . . .	35
Գ Լ . Դ .	Քրիստինէի պարգևը . . . . .	48
Գ Լ . Ե .	Օտարական պատանի մը . . . . .	60
Գ Լ . Զ .	Կարողոսի պատմութիւնը՝ ջրէն ազատելէն ետև . . . . .	71
Գ Լ . Է .	Ժողովրդապետին ամբոց դալը . . . . .	81





4822-4827

2013

